

«ԿՈՎԿԱՍՅԱՆ ՏԱՆ» ՆԱԽԱԳԻԾԸ 1921–1922 ԹՎԱԿԱՆՆԵՐԻՆ՝

ՀՅ Դաշնակցության հավասարակշռող
աշխարհաքաղաքական դերակատարության լույսի ներքո*

Բանալի բառեր – «Կովկասյան տուն», Փարիզ, ՀՅ Դաշնակցություն, Ռուսաստան, Թուրքիա, Կարս, Արդահան, «Կովկասյան Հանրապետությունների Միություն», պահանջատիրություն:

Կովկասի խորհրդայնացումից հետո նախկին կովկասյան (գլխավորապես՝ այսրկովկասյան) հանրապետությունների պետական-կուսակցական ղեկավար գործիչները հիմնականում կենտրոնացել էին Փարիզում, որը լինելով ժամանակի միջազգային հարաբերությունների վրա լուրջ ազդեցություն ունեցող տերության մայրաքաղաք, միաժամանակ համարվում էր այսպես կոչված՝ «փոքր երկրների» ճակատագրի որոշման կենտրոններից մեկը:

Կովկասյան հանրապետությունների խորհրդայնացման հարցում 1920-ականների սկզբին բոլշևիկների որդեգրած անզիջում պահվածքն առաջին հայացքից թվում էր, թե պետք է բացասաբար ազդեր կովկասյան հանրապետությունների նախկին ղեկավարների վրա՝ ստիպելով չափավորել սեփական երկրների անկախության վերականգնման ձգտումները: Բայց չնայած տարածաշրջանում բոլշևիկների ստեղծած մենատիրական դրությանը, վտարանդիական քաղաքական շրջանակները չէին ցանկանում հաշտվել երկրամասի խորհրդայնացման փաստի հետ: Նրանք կարծում էին, որ Կովկասում խորհրդային կարմիր բանակի ներկայությունը ժամանակավոր երևույթ է: Մյուս կողմից էլ՝ կովկասյան վտարանդիները հավատում էին իրենց եվրոպական դաշնակից-հովանավորների աջակցությանը և հույս ունեին, որ վերջիններս անպայման կազատագրեն Կովկասը՝ նկատի ունենալով տարածաշրջանի կարևոր աշխարհաքաղաքական դիրքը:

Ուստի՝ կովկասյան նախկին ղեկավարները փորձում էին միավորել իրենց ջանքերը բոլշևիզմի դեմ պայքարում, սակայն վտարանդիության պայմաններում ևս նրանց միասնությունը՝ որպես այդպիսին, չէր կայանում: Պատճառն առանձին կողմերի (Հայաստան, Վրաստան, Ադրբեջան, Հյուսիսային Կովկաս) անկեղծ փոխհարաբերությունների համար անհրաժեշտ

*Ընդունվել է տպագրության 26.07.2015:

քաղաքական, ազգագրական և տնտեսական պայմանների բացակայությունն էր և նրանց կողմից հետապնդվող նպատակների տարբերությունը: Մանավանդ որ՝ բոլշևիկների իշխանության ամրապնդմանը զուգընթաց դրանք առնվազն միանշանակ չէին ընդունվում հենց եվրոպական տերությունների կողմից:

Տարբերություններից ամենակարևորն ու սկզբունքայինը բոլշևիզմի դեմ ընդհանուր ճակատ հարդարելու պարագայում Թուրքիայում ամրապնդվող քեմալականների հանդեպ դիրքորոշվելու հարցն էր: Այստեղ հայկական կողմն ի դեմս Հայաստանի առաջին Հանրապետության գոյության տարիներին իշխող քաղաքական ուժի՝ ՀՅ Դաշնակցության, ուներ իր ուրույն տեսակետը, որը հիմնվում էր 1920 թ. թուրք-հայկական պատերազմի ընթացքում Հայաստանից խլված տարածքների անվերապահ վերադարձի պահանջի վրա: ՀՅԴ-ն այս հարցը դիտարկում էր իբրև «Կովկասյան տան» ձևավորմանն իր մասնակցության նախապայման: Արդյունքում՝ կայացած բանակցություններն ապացուցեցին, որ Կովկասում խաղաղությունը, համալիր անվտանգությունն ու բարգավաճումն առանց Հայաստանի կամ հայկական գործոնի ուղղորդող դերի, անիրականանալի ու պատրանքային է և ի վերջո՝ դատապարտված է ձախողման:

Տվյալ գործընթացի սկզբնավորման շրջանում՝ 1921 թվականին, Հայաստանի նախկին ղեկավարների (ավելի հստակ՝ ՀՅԴ կուսակցության առաջնորդների) հետևողական, հաստատական ու իրապաշտ դիրքորոշումների շնորհիվ հակաբոլշևիկյան նպատակների վրա հիմնված, այսպես կոչված՝ «Կովկասյան տան» նախագիծը լուրջ փոփոխությունների ենթարկվեց: ՀՅԴ գործընկերները, այդ թվում՝ Ադրբեջանի վտարանդիական իշխանություններ, միասնաբար առաջադրեցին Թուրքիային ուղղված՝ 1914 թ. սահմաններում Կովկասի տարածքների անձեռնամխելիությունը հարգելու պահանջը: Ու թեև քեմալական Թուրքիան այդպես էլ Հայաստանից խլված տարածքների վերադարձի հարցում որևէ հստակ և իրական քայլ կատարելու պատրաստակամություն չդրսևորեց, բայց սրանով ստեղծվեց Կովկասի միասնության նոր հարացույց:

Ուրեմն՝ վտարանդիական շրջանակներում ՀՅԴ-ի ստանձնած աշխարհաքաղաքական հստակ գործառույթը ապահովեց տարածաշրջանի երկրների միասնության հակախորհրդային ընկալման տարանջատումը հակառուսականից՝ նրանց անկախության ու ինքնիշխանության վերականգնման խնդիրը դիտարկելով ոչ միայն բոլշևիկյան, այլև քեմալական սպառնալիքի հաշվառման տիրույթում:

Միայն ՀՅԴ-ի առաջադրած՝ Թուրքիայի կողմից զավթված Հայաստանի առաջին Հանրապետության հողերի վերադարձի խնդրի հանդեպ տարածաշրջանային համերաշխության ապահովման հարցը ստեղծեց Կովկասի իրական, այսինքն՝ հակաբոլշևիկյան և միաժամանակ՝ հակաքեմալական միասնության աշխարհաքաղաքական ենթահողը: Այդ պատճառով «Կովկասյան տան» նախագիծը կյանքի կոչելու փորձեր անող ՀՅԴ-ի գործընկերներին մնում էր ընտրություն կատարել Կովկասի իրական միասնության և նրա բացակայության միջև:

Ուստի 1921 թ. հունիսի 10-ին պաշտոնապես հռչակվեց Վրաստանի, Հա-

յաստանի, Ադրբեջանի և Լեռնական հանրապետության (Հյուսիսային Կովկասի) ներկայացուցիչներից կազմված «Կովկասյան Հանրապետությունների Միությունը» և բանակցություններ սկսվեցին Ֆրանսիայի իշխանությունների հետ՝ քաղաքական և ռազմական աջակցություն ստանալու համար: Չնայած դրան՝ կովկասյան վտարանդիների միջև առկա ներքին տարածայնությունները վերջնականապես չհաղթահարվեցին: Ավելին, 1922 թ. ապրիլ-մայիսին կայացած Ջենովայի կոնֆերանսի նախօրեին սկսեց փոխվել նաև Անտանտի վերաբերմունքը, որը փորձում էր սովետների հետ շփումներ սկսել՝ ցարական և այլ կառավարությունների նախկին պարտքերի ճանաչման համար:

Հետագայում՝ 1926 թվականին, անտեսելով ՀՅԳ-ի կողմից ներկայացված «Կովկասյան տան» հայկական հարացույցը, Ադրբեջանի, Վրաստանի, Հյուսիսային Կովկասի և Ուկրաինայի ներկայացուցիչները թուրքական և լեհական հատուկ ծառայությունների աջակցությամբ Փարիզում ստեղծեցին այսպես կոչված՝ «Պրոմեթևս»-ի ուխտը», որն անփառունակ վախճան ունեցավ: Զախողվեց նաև՝ Ադրբեջանի, Վրաստանի և Հյուսիսային Կովկասի 1934 թ. պակտը: Բայց սրանք արդեն «Կովկասյան Հանրապետությունների Միություն» չէին, այլ աջակցություն Կովկասում Թուրքիայի կամ՝ Լեհաստանի հետապնդած նպատակներին:

Սույն հրապարակման մեջ ներառված ուշագրավ փաստաթղթերը՝ արձանագրություններ, հռչակագրեր, նամակագրություններ, ուղղակիորեն վերաբերում են «Կովկասյան տան» նախագծի շուրջ 1921-1922 թթ. նախկին կովկասյան պետական-կուսակցական ղեկավար գործիչների միջև ծավալված բանակցային գործընթացին: Ներկայացվող փաթեթը թեև ամբողջական չէ, բայց հնարավորություն է տալիս պատկերացնելու կովկասյան հիմնախնդրի էությունը, զարգացման դինամիկան և առաջ եկած հակասությունների պատճառներն ու հետևանքները:

Փաստաթղթերը պահպանվում են Հայաստանի Ազգային արխիվի Ալեքսանդր Մյասնիկյանի անձնական ֆոնդում (թիվ 1435): Արտասահմանից ստացված հետախուզական տեղեկատվության տեսքով դրանք Ալեքսանդր Մյասնիկյանին են ուղարկվել 1924 թ. հունվար-սեպտեմբերին, երբ նա Խորհրդային Այսրկովկասի կուսակցական ղեկավարն էր: Բոլոր վավերագրերը տպագրվում են բնագրային հավատարմությամբ, գլխատառ-մեծատառով անվանումների տեքստային պահպանմամբ, ուղիղ փակագծերում տրվել են խմբագրական հավելումներ:

Փաստաթղթերը ռուսերենից թարգմանվել են հայերեն և հրապարակվում են առաջին անգամ: Համոզված ենք, որ դրանք խիստ ուսանելի են ոչ միայն գիտաձանաչողական տեսանկյունից, այլև ունեն արդիական սուր հնչեղություն:

*Ավագ Ա. Հարությունյան
Պապրմ. գիյր. թեկնածու*

«CAUCASIAN HOUSE» PROJECT IN 1921–1922

In the light of geopolitical balancing role of ARF Dashnaktsutyun

Avag A. Harutyunyan

ԱՐԽԻՎ

Key words – “Caucasian House”, Paris, ARF Dashnaktsutyun, Russia, Turkey, Kars, Ardahan, the Union of the Caucasian republics, claim.

ПРОЕКТ «КАВКАЗСКОГО ДОМА» В 1921–1922 ГГ

В свете уравнивающей геополитической роли АРФ

Дашнакцютюн

Аваг А. Арутюнян

Ключевые слова – “Кавказский дом”, Париж, АРФ Дашнакцютюн, Россия, Турция, Карс, Ардаган, Союз кавказских республик, рекламация.

ԹԻՎ 1

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Կովկասյան Հանրապետությունների Ներկայացուցիչների Խորհրդակցության, 1921 թ. մայիսի 8, Ադրբեջանական Պատվիրակության նստավայրում:

Ներկա էին՝ Ադրբեջանի (Ա. Մ. ք. ԹՈՓՉԻԲԱՇԵՎ՝, Ա. Ա. ՇԵՅԽ-ՈՒՆ-ԻՍԼԱՄՈՎ, Դ. ք. ՀԱՋԻԲԵՎՈՎ, Մ. ՄԱՀՆՈՒՍՅԱՆՎ), Հայաստանի (Ա. Ա. ԱՀԱՐՈՆՅԱՆՆԻՔ, Ա. Ի. ԽԱՏԻՍՅԱՆՆԻՔ, Տ. Ա. ԲԵԿՂԱԴՅԱՆՆԻՔ), Վրաստանի (Ե. Պ. ԳԵԳԵՉԿՈՐԻՆՆԻՔ, Ն. Ս. ՉԻԵԻՉԵՆԻՔ, Ն. Վ. ՌԱՄԻՇՎԻԼԻՆՆԻՔ, Կ. Բ. ՍԱԲԱԽՏԱՐԱՇՎԻԼԻՆ և Մ. Ա. ՍՈՒՄԲԱՏՈՎ), Հյուսիսային Կովկասի (Ա. Մ. ք. ՉԵՐՄՈՆԵՎՆԻՔ) ներկայացուցիչները:

ՆԱԽԱԳԱՀԸ բացում է նիստը և ներածական խոսքում նշում, որ իրենց ժողովուրդների անկախության և բարօրության համար համատեղ աշխատանք վարելու անհրաժեշտության մասին միտքը կովկասյան գործիչների համար նոր չէ, և այդ ուղղությամբ՝ բազմիցս, այս կամ այլ պատճառով ցավոք արդյունքի չհասած, փորձեր են եղել: Այս միասնությունից շեղումը մեզ հանգեցրեց նրան, որ այսօր մենք պետք է այդ շեղման ու միգուցե և սխալի ուղղությամբ մտորենք և դա գիտակցենք:

- 1 **Թոփչիբաշև Ալի Մարդան բեկ** (1862–1934): 1918 թ. դեկտեմբերից Ադրբեջանի խորհրդարանի նախագահ: Եղել է Փարիզի վեհաժողովում Ադրբեջանի պատվիրակության նախագահ:
- 2 **Ահարոնյան Ավետիս Առաքելի** (1866–1948): 1917-ից Հայոց ազգային խորհրդի նախագահ: Փարիզի վեհաժողովում եղել է Հայաստանի Հանրապետության պատվիրակության նախագահ, ստորագրել է Սևրի պայմանագիրը, մասնակցել 1921 թ. Լոնդոնի, 1922–1923 թթ. Լոզանի խորհրդաժողովներին:
- 3 **Խատիսյան Ալեքսանդր Հովհաննեսի** (1874–1945): 1909–1917 թթ. եղել է Թիֆլիսի քաղաքապետ և Քաղաքների միության Կովկասյան կոմիտեի նախագահ: 1918 թ. նոյեմբերից՝ Հայաստանի առաջին Հանրապետության արտաքին գործերի նախարար, 1920 թ. մայիս-հոկտեմբերին՝ վարչապետ:
- 4 **Տիգրան Բեկաղայանը** եղել է Հայաստանի առաջին Հանրապետության դեսպանը Թիֆլիսում և Բաքվում:
- 5 **Գեգեչկորի Եվգենի Պյոտրի** (1881–1954): 1917 թ. նոյեմբերից Անդրկովկասյան կոմիսարիատի նախագահն էր, 1918 թ. նոյեմբերից՝ Վրաստանի արտաքին գործերի նախարարը:
- 6 **Չևեիձե Նիկոլայ Սեմյոնի** (1864–1926): 1918 թ. եղել է Անդրկովկասյան Սեմի նախագահ, ապա Փարիզի վեհաժողովում՝ Վրաստանի պատվիրակության նախագահ:
- 7 **Ռամիշվիլի Նոյ Վիսարիոնի** – եղել է Վրաստանի առաջին վարչապետը:
- 8 **Չերսոն Թափա Աբդուլ Մեջիդ** (1882–1937): 1918 թ. մայիսից՝ Հյուսիսային Կովկասի Լեռնականների հանրապետության առաջին և վերջին վարչապետը, ապա Փարիզի վեհաժողովում՝ նրա պատվիրակության նախագահը:

52 հոկտեմբեր-դեկտեմբեր, 2015
Կ (ԺԳ) փայտի, թիվ 4

ՎԿՎ համահայկական հանդես

Մեր ուշադրությունից վրիպեց, որ այնպիսի կարևոր քայլի կատարումն՝ ինչպիսին նախկին Ռուսաստանից անջատումը և անկախությունն է, մեր վրա էժան չի նստի:

Ճակատագիրը հենց ի դեմս նույն Ռուսաստանի՝ այդ հիշեցրեց մեզ: Այստեղ մեր գտնվելու երեք տարվա ընթացքում և կոնֆերանսներում, և առանձին՝ մենք բազմիցս լսել ենք, որ սխալ է, երբ յուրաքանչյուր փոքր ժողովուրդ իր առանձին գործերով և նկրտումներով է հանդես գալիս: Ադրբեջանի հետ կատաստրոֆից⁹ հետո մենք այդ նախատինքը ստիպված էինք ավելի հաճախ լսել: Սակայն, մենք հույս ունեինք, որ մնում են դեռևս երկու հարևան հանրապետություններ, որոնք ազատ են, և իրենց իսկ սեփական շահերից ելնելով կօգնեն ազատագրվել նաև Ադրբեջանին: Դա տեղի չունեցավ, և ցավոք, մեր հարևանները՝ և Հայաստանը, և Վրաստանը, նույն հարվածին ենթարկվեցին¹⁰, չխտսելով արդեն Հյուսիսային Կովկասի մասին, որը դեռևս մինչ մեզ՝ ներխուժման ենթարկվեց, և այժմ ողջ Կովկասը ռուս բոլշևիկների իշխանության ներքո է գտնվում: Այժմ մեր առաջ հարց է ծագում՝ հետայսու ինչպես վարվել, և այդ կապակցությամբ ևս ակամայից հարց է առաջանում՝ մեր ժողովուրդների անկախությունը վերականգնելու և բոլշևիկյան լծից ազատագրվելու նպատակով միավորվելու և համատեղ գործելու պահը չի՞ հասունացել: Այդ նպատակը, պետք է հուսալ, հիմք կտա մեր հետագա բարենամության և համատեղ աշխատանքի համար: Արդյո՞ք պետք է կասկածել, որ այդպիսի միության նպատակահարմարությունը չի կարող վիճարկվել, քանի որ նույնիսկ Եվրոպայի մեծ տերությունները և Ամերիկայի [սման] պետությունները իրենց ուժերի վրա միայնակ չեն կարող հենվել և հարկադրված են միմյանց միջև միությունների կնքման դիմել: Եթե դա այդպես է, և ամենուր դաշնային սկզբունքի անհրաժեշտությունը նկատելի է, ապա՝ նման միությունը հատկապես կարևոր և անհրաժեշտ է: Այդ հարթությունում մեզ ադրբեջանցիներին՝ հարևան ժողովուրդների ներկայացուցիչների հետ բազմիցս հարկ էր լինում խոսել:

Վրաստանի և Հյուսիսային Կովկասի ներկայացուցիչներն, ըստ էության, կովկասյան հանրապետությունների միջև միության կնքումն անհրաժեշտ էին գտնում, և կանգ չառնելով դրա մանրամասների վրա՝ հարկավոր է այժմ ևեթ այդ միության հիմնական գծերը որոշել, Ալլիէին¹¹ տեղեկացնել, և ապա՝ համատեղ ձեռնամուխ լինել մեր ժողովուրդների ազատագրման աշխատանքին: Բայց նկատի ունենալով, որ հայկական ներկայացուցիչները Փարիզից բացակայում էին, որոշվեց նրանց վերադարձին սպասել, որպեսզի այդ կարևոր հարցի քննարկումը նրանց հետ համատեղ ձեռնարկենք:

Վերջին օրերին ես այդ հարցի շուրջ զրուցել եմ Հայկական Պատվիրակության ներկայացուցիչ պ. ԱՀԱՐՈՆՅԱՆԻ հետ, ով այդ գաղափարի նկատմամբ համակրող վերաբերմունք էր արտահայտել: Կովկասյան Հանրապետությունների Ներկայացուցիչների այսօրվա խորհրդակցությունում քննարկման ենթակա հարցը կարող է արտահայտվել ձեր ուշադրությանն առաջարկվող հետևյալ թեզերում, մասնավորապես.

1

Կովկասի չորս անկախ հանրապետությունների՝ ՎՐԱՅԱԿԱՆ, ԱՌԲԵՋԱՆԱԿԱՆ, ԼԵՌՆԱԿԱՆՆԵՐԻ և ՀԱՅԿԱԿԱՆ, միավորումը մեկ ԿՈՎԿԱՍՅԱՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԻՈՒԹՅԱՆ մեջ. Ա. ներքին գործերում նրանցից յուրաքանչյուրի լրիվ անկախություն, և Բ. բոլոր տարածքային և սահմանային վիճելի հարցերի լուծում ԱՐԲԻՏՐԱԺԻ միջոցով:

Միությունը սկզբնական շրջանում դրսևորվում է.

⁹ Աղետ:

¹⁰ Նկատի ունի խորհրդայնացումը:

¹¹ Նկատի ունի Անտանտի երկրներին:

1. Պաշտպանական-ռազմական միության մեջ,
2. Մաքսային միության մեջ,
3. Արտաքին հարաբերությունների ընդհանուր վարման մեջ:

2

Ռուսաստանի նկատմամբ վերաբերմունք:

3

Թուրքիայի նկատմամբ վերաբերմունք:

4

Հայկական հարց:

5

Օգնության դիմում Եվրոպային (Ալլիե)

Ես վերջացրի և խնդրում եմ ցանկացողներին ներկայացված թեզիսների շուրջ արտահայտվել:

Ա. Մ. ՉԵՐՄՈՒՎ: Ես կցանկանայի ժողովին այն հարցի շուրջ տեղեկացնել, թե այդ միության օգնության վրա ինչպիսի հույսեր կարելի է դնել: Մենք 2-3 անգամ ֆրանսիական քաղաքականության անվանի ղեկավարների հետ զրուցել ենք, այդ զրույցներից մեկին մասնակցել է նաև գեն. ՎԵՅԳԱՆԸ¹²: Այդ միությանը Ֆրանսիայի կողմից բարոյական օգնությունն իրապես ուրվագծվում էր, չէր բացառվում և նյութական աջակցության հնարավորությունը:

Ա. Ա. ԱՀԱՐՈՆՅԱՆ: Երևի հարցը մեզ՝ հայկական ներկայացուցիչներին է ուղղվում: Մեզ մոտ այլոց հետ այդ հարցում ոչ մի տարբերություն չկա, և իհարկե, մեր տեղը ձեզ հետ է, և նույնիսկ մեր կուսակցության ծրագիրը¹³ կովկասյան ժողովուրդների դաշնության մասին է նշում: Ռուսաստանի նկատմամբ հարցը պարզ է, և առաջին երկու թեզիսները վեճեր չեն առաջացնում: Բայց Թուրքիայի նկատմամբ է հարց ծագում: Իրականում, այդ առումով, հայտարարություններ են եղել, որ այդ հարցը բարենպաստ կլուծվի, սակայն, ցավոք, թուրքական քաղաքականության ղեկավարների հայտարարությունների և փաստերի միջև հսկայական տարբերություն կա, և մինչ մենք կընդունենք թուրքական գործիչների գաղափարախոսությունը, որի անկեղծության մեջ կասկած չկա, մեզինք ոչինչ կարող է չմնալ: Միայն գաղափարախոսությունը, միայն սկզբունքային համաձայնությունը քիչ է, գործնական քայլեր, իրական քայլեր են հարկավոր: Ահա թե ինչու՝ Թուրքական Հայաստանի մասին հարցը հարկավոր է նախ և առաջ լուծել, քանի որ դա ընդհանուր Հայկական հարցի մասն է: Աղբրեջանը, Հյուսիսային Կովկասը և Վրաստանի մեծ մասը ռուսների կողմից գրավված են, իսկ Հայաստանը¹⁴ գրավված է թուրքերի կողմից, և հայ-թուրքական հարցն աչքաթող անել, ասել, որ այն հետո կլուծենք, մեզ համար հարցի անբավարար լուծում կլինի:

ՆԱԽԱԳԱՀ: Երբ Դուք գործնական քայլեր եք պահանջում, ապա հարկավոր է, որպեսզի դրանք անհրաժեշտ պայմաններում հնարավոր լինեն իրագործել, այսինքն՝ այն ժամանակ, երբ միություն կնքելով՝ մենք կկարողանայինք հանդես գալ Կովկասյան

12 Վեյգան Մաքսիմ (1867-1965): 1920-1922 թթ. եղել է Լեհաստանի բանակում ֆրանսիական ռազմական առաքելության պետ, ապա ղեկավար բարձրագույն զինվորական պաշտոններ զբաղեցրել ֆրանսիական բանակում:

13 Նկատի ունի 1907-ին ՀՅԴ 4-րդ Ընդհանուր ժողովի ընդունած ծրագրով նախատեսվող՝ Ռուսաստանի ֆեդերատիվ հանրապետության կազմում ինքնավար «Անդրկովկասեան ռազմավար հանրապետություն» ստեղծելու առաջադրանքը: Տե՛ս Հ.Յ. Դաշնակցություն: Ծրագիր, Ժընև, հրատ. «Դրօշակ»-ի, 1907, էջ 18:

14 Նկատի ունի Արևմտյան Հայաստանը և 1920 թ. պատերազմում խլված տարածքները:

ժողովուրդների միության, այլ ոչ թե՛ յուրաքանչյուրն առանձին իր անունից:

Ա. Ա. ԱՇԱՐՈՆՅԱՆ: Պատկերացրեք, որ մենք Կովկասյան Միության կողմից ներկայանում ենք թուրքական գործիչներին, այդ նույն Բեքիր-Սամի բեյին¹⁵, խնդրում լուծել Հայկական հարցը՝ մեզ մերժեցին, ասացին ոչ: Եվ ի՞նչ հետո: Եթե գաղափարը ձիշտ է, որ Կովկասյան Դաշնության գոյությունն՝ որպես Ռուսաստանի և Թուրքիայի միջև պատնեշ-պետություն, ձեռնառու է Թուրքիային, ապա հարկավոր է, որպեսզի նա հատուցի և ընդառաջի այդ դաշնության ձևավորմանը:

Ն. Վ. ՌԱՄԻՇՎԻԼԻ: Ես կցանկանայի Հայկական Պատվիրակությանը մեկ հարց տալ՝ արդյո՞ք նրանք ենթադրում են, որ մենք կներկայանանք և կասենք կոնֆերանսին¹⁶, որ մենք կստեղծենք Կովկասյան Դաշնություն, եթե դուք լուծեք Թուրքական Հայաստանի հարցը:

Ա. Ա. ԱՇԱՐՈՆՅԱՆ: Մենք ամենևին պարտադիր կերպով չենք ցանկանում, որպեսզի մեր հարցը կոնֆերանսում լուծվի: Էլ ավելի լավ կլինի, եթե մենք կարողանայինք այն անմիջապես թուրքերի հետ լուծել, սակայն եթե դա չլինի, այն ժամանակ, իհարկե, հարկ կլինի կոնֆերանսի որոշմանը սպասել:

Ե. Պ. ԳԵԳԵՉՎՈՐԻ: Ադրբեջանական և Լեռնական [հանրապետությունների] ներկայացուցիչների հետ խորհրդակցություններում Հայկական հարցը բարձրացվել է, և մենք բոլորս համաձայն էինք, որ առանց նրա լուծման՝ կոնֆերանս չէր կարող լինել, քանի որ այդ հարցը մեր մարմնի վրա փուշ էր և այն պետք էր հանել: Ա. Մ. Բ. ԹՈՓՉԻԲԱՇԵՎԸ իրավացի է, որ քանի դեռ այդ միությունը չկա, այսինքն՝ քանի դեռ իրավաբանական անձ չկա, մենք Թուրքիային չենք կարող դիմել և այդ հարցը լուծման դնել: Սակայն, պ. ԱՇԱՐՈՆՅԱՆԸ նույնպես իրավացի է, որ քանի դեռ մեզ համար և մեր միջև այդ հարցը չենք լուծել, միություն չի կարող լինել, և միայն այն բանից հետո, երբ մեզ համար այդ հարցը կհատակեցվի՝ միության մասին կարող ենք խոսել: Գուցե այդ քայլի քննարկման ժամանակ նրանց միջև այնպիսի տարակարծություններ կծագեն և կարտահայտվեն, որ միությունն անհնարին կլինի: Դրա համար էլ՝ անան միության անհրաժեշտությունը մենք սկզբունքորեն ընդունում ենք, և Ռուսաստանի ու Թուրքիայի նկատմամբ վերաբերմունքի հարցը քննարկման ենք դնում:

Պ. Մ. ՉԵՐՄՈՆՎ: Այստեղ հարց է առաջադրվում, որպեսզի Հայկական հարցի նկատմամբ Թուրքիայի վերաբերմունքը նախօրոք որոշվի, քան մեր կոնֆերանսը կստեղծվի: Մեզ համար չէր ուրվագծվում կոնֆերանսն առանց Հայաստանի: Մենք՝ մահմեդական հանրապետություններս՝ Ադրբեջանը և Հյուսիսային Կովկասը, Հայկական հարցի շուրջ թուրքական ներկայացուցիչների առաջ հստակ ենք հանդես եկել: Ես Բեքիր-Սամի բեյի հետ զրուցել եմ և նա ասել է, որ իրենք Կովկասյան Հայաստանի վրա ոչ մի հավակնություն չունեն: Ես թուրքական հայերի մասին հարց առաջադրեցի և պատասխան ստացա, որ և այդ հարցը մենք բարեհաջող կլուծենք, սակայն այդ ամենը՝ կովկասյան կոնֆերանսի ստեղծման պայմաններում: Այն, ինչ մենք կարող էինք առանձին-առանձին, մինչ այժմ արված է, այժմ նոր ձև է հարկավոր՝ կոնֆերանս է հարկավոր, որպեսզի մենք կարողանանք կրկին այդ հարցը բարձրացնել:

Ա. Ի. ԽԱՏԻՍՅԱՆ: Ես կցանկանայի հարցին գործնական մոտենալ և ապագայի համար անցյալից եզրակացություն կատարել: Գլխավորն այն է, ինչու մենք՝ հայկական գործիչներս, մինչ այժմ սխալվել ենք, դա այն է, որ մենք բոլոր արտաքին պարագաներն իբրև մեզ համար բարենպաստ ենք դիտարկել, և դրա վրա կառուցել մեր ենթադրությունները: Մենք մտածում էինք, որ եվրոպական տերությունները ողջ ժամանակ մեր մասին մտածելով էին զբաղված, որ Ռուսաստանը քանդվել է, որ Թուրքիան վերջնականապես ջախջախված է: Սակայն, պարզվեց՝ այդ ամենն այդպես չէ: Այժմ, երբ մենք ապագայի մասին ենք խոսում, պարտավոր ենք ձգտել այդ

15 Բեքիր Սամի բեյ (1865-1933): Քեմալական կառավարության արտաքին գործերի առաջին նախարար:

16 Նկատի ունի եվրոպական տերությունների կոնֆերանսը:

սխալները չկրկնել և արտաքին պայմաններն ամենից վատթար ենթադրել:

Ես նախ և առաջ այն ամենի վրա կանգ կառնեմ, որ մեր հարևաններ Ադրբեջանը և Վրաստանը մեզ մշտապես ռուսասիրության մեջ էին կասկածում: Եթե ցանկանում եք՝ այդ ռուսասիրությունը մեր ժողովրդի մեջ կա, նույնպես՝ այն վրացի և ադրբեջանցի ժողովուրդների մեջ կա: Սակայն այդ ռուսասիրությունն այն ժամանակ է ի հայտ գալիս, երբ ժողովրդի վրա մեկ այլ կողմից ճնշում է գործադրվում: Այսպես, Հայաստանի վրա թուրքերի հարձակման ժամանակ բնակչությունը բոլշևիկների գալուստն արցունքներն աչքերին և գրկախառնություններով դիմավորեց և հենց իրենք՝ գյուղացիները կառավարության նախագահ ՕՀԱՆՋԱՆՅԱՆԻՆ բոլշևիկների ձեռքը հանձնեցին: Իսկ որոշ ժամանակ անց՝ այն նույն գյուղացիները, որոնք ձերբակալել էին ՕՀԱՆՋԱՆՅԱՆԻՆ, մեր երեք նախարարներին գաղտնի Վրաստան անցկացրին և բոլշևիկներին քշեցին: Այժմ Հայաստանում բոլշևիկների հետ մարտեր են ընթանում¹⁷, և այդ մասին նույնիսկ օգնության վերաբերյալ խնդրանքով հեռագիր կա: Ինչո՞ւ է դա տեղի ունենում: Որովհետև թուրքերը մեզ համեմատաբար հանգիստ էին թողել և բնակչությունը նրանց դրա համար շնորհակալ է և բո [լ] շևիկների դեմ է կռվում: Սակայն, եթե այժմ էլ թուրքերը շարժվեն Ջանգեզուրի վրա, ես չեմ գարմանա, որ նույն հայերը, ովքեր այսօր մարտնչում են բո[լ]շևիկների դեմ, կմիավորվեն ռուսների հետ: Երբ այդ ամենը գիտես և գնահատում ես, ապա պարզ է դառնում, որ այդ երկու խնդիրները միաժամանակ է հարկավոր լուծել: Մենք այլ պլան չունենք: Անհրաժեշտ է թուրքերի հետ հաշտվել և նրանց հետ հարցի լուծմանը հանգել: Նախկին երևակայական նախագծերը մենք չունենք: Մեր նախագծերն այժմ շատ համեստ են, սակայն հարկավոր է, որպեսզի ժողովուրդը համաձայն լինի: Եթե մեր ժողովուրդն իմանա, որ թուրքերը կշարունակեն ճնշել իր վրա, ապա կոնֆերանսի գաղափարը նրա շրջանում հեղինակություն չի ունենա: Մյուս կողմից, եթե հայտնի դառնա, որ թուրքական հարցի հետ վերջացված է, իհարկե մեր ժողովուրդը դրան կգնա: Մենք պարտավոր ենք և թուրքերի հետ համաձայնության նպատակով կխոսենք, ու եթե դրան նաև դուք միանաք, ապա գործն ավելի հաջող կընթանա: Ռուսասիրության մեջ մեզ չի կարելի մեղադրել: Եթե թուրքերի հանդեպ վերաբերմունքը չհստակեցվի, մեր ղեկավարները բոլշևիկների դեմ ապստամբության չեն համաձայնվի: Դրա համար էլ մենք կոնֆերանսի նկատմամբ ոչ թե սկզբունքային, այլ գործնական բնույթի զգուշավորություն պետք է ցուցաբերենք: Ես հիշում եմ, որ դեռ Կոստադնուպոլսում Թալաթ փաշան՝ որպես հին փորձառու դիվանագետ, խորհուրդ տվեց երեկոյան երեք թղթեր չստորագրել, որը հաջորդ օրվա առավոտյան պետք է գնար, և որ ավելի լավ է՝ մինչև առավոտ սպասել, քանի որ գիշերվա ընթացքում կարող է շատ բան տեղի ունենալ, և այն հենց ուղարկելուց առաջ ստորագրել: Դա շատ իմաստուն խորհուրդ է: Մյուս կողմից, հարկավոր է նկատի ունենալ, որ այդ միությունը Ռուսաստանի հանդեպ պետք է անվտանգ լինի, որպեսզի դրանում նա իրեն ուղղված մարտահրավեր չտեսնի: Դուք գիտեք, որ ինտերվենցիայի քաղաքականությունն այժմ բոլոր տերությունների կողմից մերժված է: Դրա համար էլ սկզբում մենք պետք է համոզվենք, թե դաշնակիցների օգնության վրա ինչքան իրական հույս կարող ենք դնել:

Այդ պատճառով, այժմ, ընդհանուր քայլեր ձեռնարկելու, բոլշևիկների դեմ ընդհանուր բողոք ներկայացնելու և թուրքերի կողմից մեր տարածքների բռնագավառման դեմ [պայքարելու] բարենպաստ ժամանակն է: Հետո կարելի է կարծիքների փոխանակման համար տեղեկատվական բնույթի ընդհանուր մարմին ստեղծել: Մենք միության այդ գաղափարին լիակատար համակրանքով ենք նայում, սակայն անհրաժեշտ է, որպեսզի թուրքերի և դաշնակիցների կողմից իրական երաշխիքներ լինեն:

Ս. ՄԱՀԵՆՈՒՄՈՎ: Հայերին ռուսասիրության մեջ մեղադրանք չի եղել: Նրանք ոչ ռուսասեր են եղել, ոչ էլ թուրքասեր, այլ՝ հայասեր, քանի որ ցանկանում էին հայտնի ազգային իդոն իրականացնել, և բավարար ուժեր չունենալով՝ դա դրսում են փնտրել:

17 Նկատի ունի Մյունխենում շարունակվող հերոսամարտը:

Ինչ վերաբերում է քննարկվող հարցին, ենթադրում են, որ հարկավոր է իրական դրույթների իրականացման պայմաններ առաջադրել: Սակայն պ. ԽԱՏԻՍՈՎԻ ելույթից երևում է, որ դրույթունը մնում է նախկինը և մենք հին ճանապարհով ենք ընթանում: Մենք այստեղ ոչ Թուրքիայի, ոչ Ռուսաստանի շահերը կոչված չենք պաշտպանել: Ա. Ի. ԽԱՏԻՍՈՎԸ հարց է առաջադրում, որպեսզի Ռուսաստանն այդ միությանը՝ որպես իր դեմ ուղղորդված քայլի չնայի, և ըստ այդմ, մեր նկատմամբ թշնամաբար լինի: Արդեն իսկ մեր կողմից մեր անկախության հռչակման փաստը Ռուսաստանը, ինչպիսին էլ այն լինի, որպես իր նկատմամբ թշնամական երևույթ է դիտարկում, դրա համար էլ այդ միությունը ոչ մի տեսակ պայմաններում Ռուսաստանի նկատմամբ թշնամական երևույթ չի լինի: Ինչ վերաբերում է ապստամբությանը, ապա ոչ մեկը հենց հիմա չի առաջարկել միություն կնքելով՝ ապստամբություն կազմակերպել: Իսկ որ մեր ժողովուրդների փրկության և անկախության համար մենք պետք է միավորվենք և համատեղ գործենք՝ ես ենթադրում եմ, դրանում կասկած չպետք է լինի:

Ա. Մ. ՉԵՐՄՈՆԵՎ: Թուրքական պետական գործիչները Կարսի և Արդահանի հանձնմանը միայն Կովկասյան կոնֆերանսի ստեղծման պայմանով կարող են համաձայնվել: Եվ դա միանգամայն հասկանալի է, եթե այդ կետերի ռազմավարական դրույթունն ուշադրության առնենք, և այն, որ դրանք Թուրքիայի բանակին են հանդիսանում: Այդ պետքական կետերը կովկասյան առանձին հանրապետություններից որևէ մեկին նրանք չեն կարող հանձնել, քանի որ նրանք առանձին-առանձին թույլ են: Քանի որ կովկասյան կոնֆերանսը բավական ուժեղ կլինի, և իհարկե, կկարողանա իր չեզոքությունը պաշտպանել, եթե Ռուսաստանի կողմից Կովկասի վրայով Թուրքիայի վրա արշավելու ցանկություն լինի: Դրա համար էլ՝ ԲԵՔԻՐ-ՍԱՄԻ բեյը որոշակիորեն հայտարարեց, որ Կարսը և Արդահանը միայն այս կոնֆերանսի ստեղծման պայմանով կարող են տրվել, և այդպիսով՝ Ռուսաստանի և Թուրքիայի միջև բուֆերային պետություն գոյություն կունենա: Ելնելով այս տեսանկյունից՝ իմ համար առանց այդ հիմնական հարցի լուծման միության մասին ոչ մի ընդհանուր ելույթ չի ուրվագծվում, և մենք առանց դրա՝ ոչ մի քայլ առաջ շարժվել չենք կարող: Ես ընդհանուր ելույթներից չեմ հրաժարվում, սակայն դրանք անելով՝ ես դրանց հավատալ չեմ կարող:

Ե. Պ. ԳԵԳԵՉԿՈՐԻ: Ա. Ի. ԽԱՏԻՍՈՎԸ իր ելույթում ինքնորոշվեց, և նրա ելույթում բերված բոլոր ենթադրություններն ապացուցում են, որ հայկական պատվիրակության համար միության մասին հարցը դեռևս չի հասունացել: Այն ենթադրությունը, թե արդյոք մեր միավորումը բոլշևիկների բռնաճշումների կարող է հանգեցնել՝ անհիմն է, քանի որ բռնաճշումներն արդեն կան և առանց դրա էլ կլինեն, և քիչ հավանական է, որ դրանք կարող են հայտնվել առավել կտրուկ ձևով, եթե մեր մոտ միություն լինի: Մյուս կողմից, իհարկե, ուշադրության կառնվի, որպեսզի մեր միությունը չընկալվի որպես մարտահրավեր Ռուսաստանին՝ ոչ թե բոլշևիկյան, այլ ընդհանրապես՝ Ռուսաստանին, և դրա համար էլ քննարկման ժամանակ կարելի է համապատասխան բևեռներ գտնել, որոնք Ռուսաստանի կենսական շահերը կարող են երաշխավորել: Ինչ վերաբերում է Հայկական հարցին, ապա այն հենց մեր համար է անհրաժեշտ լուծել, և իհարկե, ընդունված որոշումը միության բոլոր անդամների համար պարտադիր կլինի: Սակայն, եթե Դուք հղում եք մեզ այն ժամանակին, երբ սահմանների մասին ձեր հարցը կլուծվի, դրանով դուք մեկուսացնում եք ձեզ և հրաժարվում այդ հարցը լուծելու հնարավորությունից, որը ձեզ այդ միությունը տալիս է: Դժվար թե դա ձեր սեփական շահերից է բխում: Ահա թե ինչու՝ ես ձեզ հարցրեցի՝ դուք արդյոք որևէ այլ քաղաքականություն նկատի ունեք: Դուք պատասխանեցիք, որ ոչ: Այդպիսի բանաձևեր, որոնք մտավախություն և անհարմարություններ չառաջացնեն՝ գոյություն ունեցող դրության մեջ չի կարող լինել: Մեզ մոտ Անդրկովկասյան սեյմի օրոք միավորում մեկ անգամ եղել է, սակայն այն գուտ ֆորմալ էր, դրանում բովանդակությունը բացակայում էր: Հետո մենք փորձեցինք առանձին և ինքնուրույն ապրել, այժմ մենք ցանկանում ենք վերակառուցվել և նոր դրոշ վերցնել: Հարկավոր է փաստագրել, որ

այլ դրոշ չկա: Դրա համար էլ, եթե այն, ինչ բանաձևեց Ա. Ի. ԽԱՏԻՍՈՎԸ, հայկական պատվիրակության որոշումն է, ապա հազիվ թե մենք ինչ որ բանի կհանգենք: Բողոքներից այժմ ոչինչ դուրս չի գա, փաստեր են հարկավոր, և Կովկասյան հանրապետությունների միավորման փաստի հետ Եվրոպան պետք է հաշվի նստի, հարկադրված կլինեն նստել և Թուրքիան, և Ռուսաստանը: Եթե դուք մտածում եք, որ սկզբում գրույցներ, իսկ հետո՝ փաստեր և արդյունքներ, ապա ենթադրում եմ, որ դա մեծ սխալ է: Ես կարծում եմ, որ սկզբում փաստեր են հարկավոր, իսկ հետո դուք արդեն գործոն կլինեք, որի հետ հարկ կլինի հաշվի նստել:

Դրա համար էլ առաջադրված բոլոր հարցերը հարկավոր է քննարկել: Հայկական հարցի նկատմամբ մեզ համար հաստատել այն, ինչ մենք այդ հարցի լուծման համար անհրաժեշտ ենք համարում: Հետո հարկավոր է Ռուսաստանի և ռուսական շահերի նկատմամբ մեր վրիպումները ձգբտել և ձևեր գտնել, որպեսզի մեր միությունը Ռուսաստանի կենսական շահերին որպես մարտահրավեր կամ պատերազմ չհասկացվի: Հարկավոր է մեր սահմանները նշել և համաձայնության ձևը պարզաբանել: Եթե մենք կարողանանք այդ հարցերը լուծել և մեզ համար համապատասխան ձևեր գտնել, ապա այդ ժամանակ դրանից իրական արդյունքներ կարող են թլսել: Եթե ոչ, և դուք դա անիրականաձևալի եք համարում, ապա այդ դեպքում՝ դա ձեր կողմից հրաժարում է և մենք ստիպված ցավով մեկ անգամ ևս պետք է փաստագրենք, որ մեր համաձայնությունը չստացվեց:

Ա. Ա. ՇԵՅԻ-ՈՒՆ-ԻՍԼԱՄՈՎ: Հայկական հարցի նկատմամբ մեր պատվիրակությունը և ընդհանրապես մեր բոլոր գործիչները միշտ այն իմաստով են արտահայտվել, որ այդ հարցը Թուրքիայի հետ պետք է կարգավորվի, և հենց այդ իմաստով էլ մեր պատվիրակությունն այստեղ Անգորայի պատվիրակության հետ խոսել է: Սակայն բանը նրանում է, որ այդ հարցում, ինչպես ես Անգորայի պատվիրակության և ԲԵՔԻՐ-ՍԱՄԻ բեյի հետ հանդիպման ժամանակ խոսել եմ, երկու ծայրահեղություն են հանդիպում. մի կողմից՝ թուրքական ծայրահեղություն (մաքսիմալիզմ), մյուս կողմից՝ հայկական, և դրանք հաշտեցնել, և ըստ այդմ էլ այս պայմաններում համաձայնություն գտնել շատ դժվար է: Այդ հարցում մենք ոչ մի պատրանք չենք տածում այն իմաստով, որ առանց այդ հարցի լուծման՝ Հայաստանի քաղաքականությունը ռուսասիրական կլինի և Ռուսաստանի կողմը կձգտի, որը միայն Ադրբեջանի և Վրաստանի վրայով կարող է Հայաստան հասնել և այդ կերպ կոնֆերանսի հնարավորություն չի լինի: Դրա համար էլ թուրքական պատվիրակության հետ բանակցություններում մենք Հայկական հարցի լուծման մասին խոսել ենք: Դա մեր ընդհանուր հարցն է, սակայն եթե այն առանձին առաջադրենք, ապա այդ դեպքում մենք հանդես չենք գա, իսկ այն դեպքում, երբ կոնֆերանսը կլինի, ապա մենք մեր համանդամներից մեկի հարցի լուծման գործում կարող ենք [միջնորդ] հանդես գալ: Դրա համար էլ միության ստեղծումն անհրաժեշտ է, որպեսզի միության անդամները միջնորդի դեր կարողանան ստանձնել: Եթե դա չստացվի, ապա իհարկե պարզ է, որ Հայաստանը պետք է դրսում փնտրի ուժ՝ ի դեմս Ռուսաստանի:

Մյուս կողմից, եթե մենք այդպիսի միություն կնքենք, այն մեր ժողովուրդների հոգեբանության վրա չի կարող բարենպաստ չազդել, որոնց դրա մասին կհաղորդվի, և դա ժողովրդի ոգու բարձրացման վրա կազդի:

Ն. Ս. ՉԻՏԵԻՉԵ: Իմ ընկերներից ոմանք դրությանը լավատեսությամբ են նայում, սակայն խոստովանեմ՝ ես ամենասկզբից հոռետեսորեն էի տրամադրված: Այն ամենից, որ մենք հայկական ներկայացուցիչներից այստեղ լսեցինք, նրանց կարծիքով, դեռևս չի հասունացել միայն կնքման համար պահը և Ա. Ի. ԽԱՏԻՍՈՎԸ նույնիսկ մեջբերեց թուրքական պաշտոնյայի իմաստուն ասույթը, որ պետք չէ ստորագրել երեկոյան, այլ լավ է սպասել մինչև առավոտ: Այդ ասույթը, անկասկած, իմաստուն է, սակայն մեզ համար այն չարագուշակ է հնչում, քանի որ մենք այժմ գիշերվա մեջ ենք գտնվում և առավոտը դեռևս չի երևում: Մենք պարտավոր ենք և հավաքվել ենք ստանդարտ այն մասին, թե ինչպես առավոտվա գալուստն արագացնենք: Հայկական

ներկայացուցիչները մեզ զգուշավորություն են առաջարկում: Արդյո՞ք զգուշավորությունն այդ առավոտվա հեռանկարի արագացման համար պիտանի է: Մեր բարեկամների կողմից առաջարկվող զգուշավորությունը, այլ խոսքով, կատարյալ անգործություն է: Մեզ եկել են նվաճելու՝ ինչ ենք անելու: Մեզ խորհուրդ են տալիս սպասել, մեզ ասում են զգուշավորություն է հարկավոր, որ մեր հապճեպ քայլը մեզ կարող է երկրի երեսից ջնջել: Մենք չենք կարող առանց դրա մատ շարժել, որպեսզի դա հյուսիսից և հարավից հաշվի չառնեն, նշանակում է՝ անգործություն է հարկավոր: Այդ անգործությունը կարող է այնպես հասկանալի լինել, որ մենք գոյություն ունեցող դրության հետ հաշտվենք: Կարող ենք արդյոք դա անել: Եվ եթե մենք պետք է գործ չանենք – կարող ենք արդյոք և պետք է գործ չանենք դուք՝ հայկական գործիչներդ, ովքեր անգործության չեք վարժվել և ովքեր մինչև մեզ՝ այդքան ժամանակ արդեն աշխատել են: Ենթադրում եմ, որ ոչ:

Անցյալում մենք համատեղ գործելու փորձեր ենք արել և չի ստացվել, մենք պարտավոր ենք այդ փորձը կրկին կատարել: Ես հասկանում եմ, որ ձեզ՝ հայերիդ ձեր մեծ հարցը դժվար է առաջադրել՝ այն մասնակիորեն բաժանելով: Գուր զգում եք այսօր ուժեղ, գուցե ոչ թե նրա համար, որ տուժել եք ավելի շատ, քան մենք, այլ նրա համար, որ ձեզ մոտ հույսերն ավելի շատ էին: Եթե մենք հարց առաջադրենք, և դուք ապացուցեք, որ միության մասին գործնական հարցը ձեզ Թուրքական Հայաստանի հարցի լուծումից բաժանում է, ապա ես կհասկանամ դա և կընդունեմ: Սակայն, եթե առաջադրված խնդիրը կենսունակ է, ապա հարկավոր է այն իրականացնել: Գուցե ստացված դասերը դեռ բավարար չեն: Ես կարծում եմ, որ մեզ դեռ ավելի դաժան հարվածներ են հարկավոր, որպեսզի մենք հասկանանք: Խոսել առարկայական պայմանների մասին, այդ բոլորը հաշվի առնել, հաշվի առնել, թե Ռուսաստանը ինչ կանի, թե Թուրքիան ինչ կանի՝ մենք այդ ամենը չենք կարող: Մենք չենք կարող այնպես անել, որպեսզի բոլորին միանգամից ընդառաջ գնանք: Հարցը մեզ համար կյանքի և մահվան մասին է: Մենք ոչ մի օտար բան չենք ուզում, մենք մերն ենք ուզում: Ամեն ինչ մենք հաշվի առնել չենք կարող, մենք կարող ենք անել մի բան – մեր վրա կողմնորոշվել: Ես մասնակցել եմ ռուսական հեղափոխությանը և կարող եմ մի բան ասել՝ ինչպիսի Ռուսաստան էլ գա՝ մեր վերաբերմամբ նա կլինի վատը, քան հին ցարական Ռուսաստանը: Ոչ մի հնարավորություն չկա այժմ հաշվարկել շատ տարիներ առաջ բոլոր բարդ հարցերը, որոնք կարող են ծագել և նրանց վրա ինչ որ բան կառուցել: Դրա համար էլ՝ կամ մեզ այնպիսի նոր մարտավարություն և այնպիսի գործելակերպ առաջարկեք, որպեսզի մենք կարողանանք դրանով ընթանալ և կարողանանք գործել, կամ էլ ապացուցեք, որ այն, ինչ մենք առաջարկում ենք, նպատակահարմար չէ, այն ժամանակ կբաժանվենք:

Ն. Բ. ՌԱՄԻՇՎԻԼԻ: Համաշխարհային պատերազմը միջազգային իրադրության մեջ մեծ փոփոխություններ ստեղծեց, և եթե մինչ այժմ Հայկական հարցը միջազգային հարց էր, ապա այդպիսին է դարձել և կովկասյան հարցը: Միթե՞ դուք կարծում եք, որ այժմ, երբ եվրոպական տերությունները Միջազգետքի և այլ վայրերի նավթի մասին մտքով են զբաղված, Բաքվի նավթն անուշադրության կթողնեն: Քանի որ գործը Ռուսաստանի կենսական շահերին է վերաբերում, մենք դա նկատի ունենք, և իհարկե դրանք կապահովենք: Սակայն մենք պետք է նախ և առաջ հիմնական հարցը՝ միության մասին հարցը լուծենք:

Դեռ 1918 թվականից սկսած՝ Թուրքիան մեր պլանները խափանում էր, դա կասկածի ենթակա չէ: Ես չեմ խոսում Ռուսաստանի մասին, որ նա կխանգարի և ակնհայտ թշնամաբար կլինի – դա հստակ է: Սակայն, իհարկե, մեր կողմից մենք կձգտենք նրա կենսական շահերը չխառնել: Այն, ինչ մենք առաջարկում ենք՝ դա կովկասյան բոլոր հանրապետությունների և առաջին հերթին Հայաստանի շահերից է բխում, չխոսելով արդեն Թուրքիայի մասին, ում շահերից է բխում իր և Ռուսաստանի միջև այդպիսի պատմեշ պետության ստեղծումը: Հարց է ծագում՝ Հայկական հարցի բարենպաստ լուծումը այդ միության կնքման հետ չէ՞ կապված: Քանի որ 1914 թվականի սահման-

ների հռչակումով մենք արդեն Կարսի մարզի և այլ տարածքների նկատմամբ նկրտումները դադարեցրինք, ինչն անկասկած հայերի համար բարենպաստ է: Մնում է Թուրքիայում Հայկական հարցը, Թուրքիայի հետ սահմանագծման կարգավորումը: Եվ այդ առթիվ ինչն է լավ՝ եթե հայերը հանդես կգան մենակ կամ էլ մեզ հետ՝ միության անունից: Կարծում եմ, որ հայկական ներկայացուցիչների մեկուսացված հանդես գալը հայ ժողովրդի համար սխալ կլինի:

Դրա համար էլ գտնում եմ, որ մեզ հարկավոր է միություն ընդունել, 1914 թվականի սահմանները հռչակել և Գերագույն Խորհրդին մեր միության մասին հայտարարել և ասել, որ մենք ընդունում ենք մեր վրա բոլոր «...»¹⁸ Թուրքիայի և Հայաստանի միջև հայերի հարցի լուծման:

Ա. Մ. ՉԵՐՄՈՆՎ: Մեր Կովկասյան Կոնֆեդերացիան, եթե այն գոյություն կունենա, եվրոպական տերություններն իրենց իսկ շահերից կպաշտպանեն ինչպես Ռուսաստանի, այնպես էլ Թուրքիայի ձեռնմից, առավել ևս, որ Թուրքիայի կողմից նրան կպաշտպանի և թուրքական գործիչների պետական իմաստությունը, ում շահերից է բխում այդ կոնֆեդերացիայի գոյությունը: Դրանից զատ, կոնֆեդերացիայի ընդունումից հետո ընդհանուր բյուրո կձևավորվի, որը ֆրանսիական շրջանակներում այն իմաստով կարող է աշխատել, որպեսզի Թուրքիային ցուցաբերած օգնությունը ֆրանսիայի կողմից կախվածության մեջ դրվի մեր կոնֆեդերացիայի նկատմամբ Թուրքիայի վերաբերմունքից:

Ա. Ա. ԱՀԱՐՈՆՅԱՆ: Այն ամենը, ինչ ասեց Ա. Ի. ԽԱՏԻՍՈՎԸ, ասել է անկեղծ: Ն. Վ. ՌԱՄԻՇՎԻԼԻՆ վերջակետ դրեց – մեր պլանները ամբողջ ժամանակ Թուրքիայի կողմից խոչընդոտվում էին, և նշանակում է, թե մենք պետք է մեր գլխավոր ուշադրությունը դրա վրա դարձնենք: Բավական է նշել 1918 թվականը, երբ Թուրքիան մինչև Բաքու հասավ: Մենք երկու թշնամի ունենք՝ Ռուսաստանը և Թուրքիան, և հարկավոր է սկզբում ծայրահեղ դեպքում բարենպաստ լինել մեկ թշնամու: Այժմ Կարսում Թուրքիան է նստած և հրաժարվում է հեռանալ այդտեղից, ինչ կարող ենք մենք անել: Դրա համար էլ մեր համար նախ և առաջ լավ կլինի Թուրքիայով զբաղվել, քանզի առանց այդ հարցի լուծման, ինչպես ասաց Ա. Ի. ԽԱՏԻՍՈՎԸ, մեր ժողովուրդը կոնֆեդերացիան չի ընկալի: Միթե մեզ ցավալի չէ չմտնել այդ միության մեջ և մի կողմում մնալ: Սակայն առանց Թուրքիայի հետ հարցի լուծման՝ թեկուզև ոչ վերջնական ձևով, մեր անդամակցությունը ոչ մի նշանակություն չի ունենա:

Ա. Ի. ԽԱՏԻՍՈՎ: Իմ նախորդ ելույթում ես բոլոր այն դժվարին կողմերի վրա մատնանշեցի, որոնք քննարկվող հարցն ունի: Ես ընդունում եմ, որ կա և միության դրական կողմը: Այսպես օրինակ, իհարկե, թուրքերը կոնֆեդերացիայում զիջող կլինեն, քան՝ առանձին հայերի նկատմամբ, դաշնակիցները (Ալլիե) նույնպես լավ կվերաբերվեն, եթե մենք միասին լինենք: Սակայն, բոլոր դեպքերում ես ուզում եմ ասել, որ մենք կանխակալ որոշումներով չենք եկել, ինչպես ասաց Ե. Պ. ԳԵԳԵՉԿՈՒՆ, այլ ես անկեղծ արտահայտեցի իմ մտքերն այն դժվարությունների հանդեպ, որոնք կարող են պատահել: Դրա համար ես մտածում եմ, որ մենք ամեն ինչ այսօրվա նիստով չպետք է վերջացնենք, և էլի պետք է հավաքվենք և գործնական ձևերի մասին մտածենք՝ Թուրքիայի հետ մեր հարաբերություններում ամեն մի բացասականի վերացման նպատակով:

ՆԱԽԱԳԱՀ: Գոյություն ունեցող բացասական կողմերը հարկավոր է էլի մեկով նվազեցնել: Այստեղ ասվեց, որ թուրքերը մեր թշնամիներն են, սակայն նրանք ամենևին մեր կովկասցիների թշնամիները չեն, և եթե մենք նրանց վրա որպես այդպիսիքի նայենք, ապա երկար ժամանակ Հայկական հարցը հնարավոր չի լինի քննարկել, քանի որ դիտարկելով նրանց որպես թշնամիների՝ մենք ոչ մի բանի չենք հասնի:

Ենթադրում եմ, որ քանի դեռ հայկական պատվիրակությունը հայտարարում է, որ իրենք հարցը թուրքական հայերի պատվիրակության հետ չեն քննարկել, ապա

18 Փաստաթղթում դատարկ է:

հարկավոր է նրանց հնարավորություն տալ դեռևս հարցի հետ ծանոթանալ և այն մինչև հաջորդ նիստը քննարկել:

Ա. Մ. ՉԵՐՄՈՆԵՎ: Բոլոր դեպքերում մեզ հարկավոր է մինչև ֆեդերացիան հարցը հստակեցնել, միասին ենք ընթանալու, թե ոչ:

Ժողովը որոշում է հաջորդ նիստը նշանակել մայիսի 15-ին¹⁹ Վրացական Պատվիրակության նստավայրում:

Նիստը հայտարարվում է փակված:

Նախագահ՝ Ա. Մ. ք. ԹՈՓՉԻԲԱՇԵՎ
Քարտուղար՝ Ա. ք. ԱԹԱՄԱԼԻԲԵԿՈՎ

ՀԱԱ, ֆ. 1435, ց. 3, գ. 28, թթ. 14-21: Վավերացված պատճեն: Մեքենագիր: Թարգմանություն ռուսերենից:

ԹԻՎ 2

ԱՂԻԲԵՋԱՆԻ, ՎՐԱՍԱՆԻ ԵՎ ԼԵՌՆԱԿԱՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԽՈՐՀՐԴԿԱՑՈՒԹՅԱՆ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆԸ ԿՈՎԿԱՍՅԱՆ ՄԻՈՒԹՅԱՆ ՀԱՐՑՈՒՄ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿԱՐԾԻՔԻ ՄԱՍԻՆ

Կովկասի երեք՝ Ադրբեջանի, Վրաստանի և Լեռնական Հանրապետությունների խորհրդակցությունը Հայաստանի Պատվիրակության հայտարարությունը քննարկելով, գտնում է, որ Կովկասյան Հանրապետությունների Միության մեջ Հայաստանի մասնակցությունը խիստ անհրաժեշտ է, և դրա համար էլ՝ առաջացած կարծիքների տարածայնությունների հաշտեցման նպատակով հնարավոր է համարում առայժմ սահմանափակվել Կովկասյան Հանրապետությունների հետևյալ համատեղ հայտարարությամբ. կհռչակվի Կովկասյան Հանրապետությունների Միություն կազմակերպելու Հանրապետությունների որոշումը, ընդ որում պետք է նշվի, որ Կովկասի Հանրապետություններն այդ Միության իրականացման գործում մի շարք լուրջ խոչընդոտների են հանդիպում՝ հատկապես այդ Միության նկատմամբ Կովկասին հարևան երկու²⁰ մեծ պետությունների վերաբերմունքի չպարզաբանման առումով, և որ այդ խոչընդոտների վերացման համար պետք է ինչպես այդ հարևան, այնպես էլ Կովկասի գործերում շահագրգիռ այլ պետությունների Միության անունից կոչ արվի:

Երեք Հանրապետությունների խորհրդակցությունը ցանկություն է հայտնում, որպեսզի Հայաստանի Պատվիրակությունը Ադրբեջանի, Վրաստանի և Լեռնականների հետ նաև Կովկասի Հանրապետությունների համատեղ հռչակագրին մասնակցի:

Իսկ եթե Հայաստանի Պատվիրակությունը համատեղ հռչակագրին մասնակցելուն դժվարությունների հանդիպի, երեք Հանրապետությունների Խորհրդակցությունը հնարավոր է համարում, որպեսզի Հայաստանի Պատվիրակությունը Կովկասի երեք Հանրապետությունների նման ելույթին հատուկ հռչակագրի միջոցով միանա, որտեղ Կովկասյան Հանրապետությունների Միության մեջ մասնակցելու սկզբունքային համաձայնության հետ պետք է նշվեն այն կոնկրետ հանգամանքները, որոնց լուծումից է կախված Կովկասյան Հանրապետությունների Միության մեջ Հայաստանի մասնակցության լիարժեք ընդունումը:

Փարիզ, 1921 թվականի մայիսի 21

ՀԱԱ, ֆ. 1435, ց. 3, գ. 28, թ. 41: Վավերացված պատճեն: Մեքենագիր: Թարգմանություն ռուսերենից:

¹⁹ Մայիսի 15-ի նիստի արձանագրությունը չի պահպանվել:

²⁰ Նկատի ունեն Ռուսաստանը և Թուրքիան:

ԹԻՎ 3
ՀՈՉԱԿԱԳԻՐ

ԱՐԽԻՎ

ՀԱՅԱՍՏԱՆԻ, ԱՌՐԲԵՋԱՆԻ, ՎՐԱՍՏԱՆԻ և ԼԵՌՆԱԿԱՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ներքոստորագրյալ ներկայացուցիչներս, Կովկասի ժողովուրդներին անկախության, ժողովրդավարական կարգի, բարիք և տնտեսական բարգավաճում ապահովելու, նրանց միջև ցանկացած տարանջատում վերացնելու և նրանց սերտ համերաշխությունն ամուր հիմքերի վրա ամրապնդելու ձգտումով լեցուն, հայտարարում ենք հետևյալը.

I

Ներկայացուցիչները միաձայն ընդունում են, որ Կովկասի աշխարհագրական դիրքը, որպես Եվրոպայի և Ասիայի միջև խիստ սահմանափակ պարանոց, Միջերկրական և Սև ծովերի ու Միջին և Առաջավոր Ասիաների միջև հարաբերություններում միջազգային մեծ ճանապարհի նրա նշանակությունը նախասահմանում է, որ այդ ճանապարհի ազատությունը, բոլոր ժողովուրդների շահերը միայն Կովկասյան Հանրապետությունների լիակատար անկախության և նրանց միջև դաշնային միության պայմաններում կարող են ապահովվել:

II

Վերոհիշյալ Հանրապետությունների ներկայացուցիչները նրա ճանաչման հարցում հավասարապես միաձայն են, որ հիշյալ Հանրապետությունների անկախության ամրապնդման և Արևմուտքի ու Արևելքի, քրիստոնեական աշխարհի և մահմեդական աշխարհի միջև միահյուսող օղակներից մեկին իր մշակութային կամքի հաջող իրականացման համար նրա բոլոր ժողովուրդների միջև սերտ միասնություն և եղբայրություն է անհրաժեշտ:

III

Դրա համար էլ Կովկասի ժողովուրդներին կյանքում, ցավոք, առաջացած հակամարտությունների ցանկացած առիթ ոչնչացնելու և հարևանության ու պատմական ընդհանրության դարավոր կապերով կապված այդ ժողովուրդների միջև համերաշխության և բարեկամության շուտափույթ իրականացման իրենց ձգտման մեջ, Կովկասի Հանրապետությունները նախ և առաջ համաձայնվում են առանց բացառության բոլոր գոյություն ունեցող կամ ապագայում նրանց միջև ծագելիք հնարավոր վեճերը և անհամաձայնությունները և առաջին հերթին փոխադարձ սահմանների մասին վեճերը արբիտրաժի պարտադիր դիմումով կարգավորել:

IV

Նկատի ունենալով ներկա հռչակագրում նշված նպատակներին հասնելու համար Կովկասյան Հանրապետությունների արտաքին քաղաքականության կատարյալ համաձայնեցվածության և նրա ուղղության միասնության անհրաժեշտությունը, այդ Հանրապետությունները պարտավորվում են ձեռնպահ մնալ միջազգային բնույթի ցանկացած գործողություններից, համաձայնություններից և պարտավորություններից, որոնք ողջ միությանը կամ նրա առանձին անդամներին կարող են վնասել, և դաշնային պայմանագրով միավորված Կովկասի առանձին պետությունների արտաքին քաղաքականության մեջ միաբանության և համաձայնեցվածության հաստատմանը նպաստել:

V

Գիտակցելով, որ Կովկասի ժողովուրդներից յուրաքանչյուրի անկախությունը սերտորեն կապված է նրա մյուս ժողովուրդների անկախությանը, Կովկասի Հան-

ԱՐԽԻՎ
Է (ԺԳ) փաթիլ, թիվ 4 (52) հոկտեմբեր-դեկտեմբեր, 2015

ՎՃՎ համահայկական հանդես

րապետություններից յուրաքանչյուրն առանձին և բոլորը ընդհանրապես արտաքին ոտնձգությունից պաշտպանության նպատակով ռազմապաշտպանական միություն են կնքում:

VI

Կովկասի ժողովուրդների գիտակցության մեջ տնտեսական առումով արմատավորված սերտ փոխկապվածության և միաժամանակ նրանց քաղաքական համերաշխության ամրապնդման համար ներքոստորագրյալները հայտարարում են, որ մաքսային սահմանները, ինչպես նաև շարժվելու ազատության մեջ մնացած բոլոր սահմանափակումները Կովկասի առանձին Հանրապետությունների միջև լուծարվում են, որ միջազգային առևտրի համար այդ Հանրապետությունները միասնական մաքսային միություն և միասնական տարանցիկ տարածք են ձևավորում:

VII

Վերոնշյալ հիմունքներով Կովկասյան Հանրապետությունները դաշնային հարաբերությունների մեջ մտնելով՝ անկեղծ ցանկությամբ տոգորված են Կովկասի Հանրապետությունների լիակատար անկախության և նրանց տարածքային անձեռնմխելիության հիման վրա հարևան տերությունների՝ Ռուսաստանի, Թուրքիայի և Պարսկաստանի հետ ամենաբարեկամական և բարիդրացիական հարաբերություններ հաստատել: Ընդ որում, Հայաստանի, Ադրբեջանի, Վրաստանի և Լեռնական Հանրապետության Ներկայացուցիչները հայտարարում են Ռուսաստանի հետ իրենց փոխհարաբերությունների կարգավորման դեպքում Կովկասում նրա տնտեսական շահերին արդարացի բավարարում տալու իրենց պատրաստակամության մասին: Պարսկաստանի կարիքները Եվրոպայի հետ տարանցիկ առևտրում հավասարապես կհարգվեն:

Թուրքիայի հետ բարեկամությանը և բարիդրացիությանը ոչ պակաս նշանակություն տալով, Կովկասյան Հանրապետություններն ընդհանուր ջանքերով պետք է Թուրքիայի կողմից 1914 թվականի սահմաններում Կովկասի տարածքի անձեռնմխելիության հարգման և պահպանման հիման վրա այդ հարաբերությունների ամրապնդմանը ձգտեն, ինչպես նաև՝ կովկասյան պետությունների ակնհայտ շահերին, նրանց միաբանությանն ի վնաս մինչ այժմ Թուրքիայում Հայկական հարցի չկարգավորվածությունը՝ որպես խանգարող գլխավոր պատճառներից մեկը դիտարկելով, այդ պետությունների ներկայացուցիչները գտնում են, որ Թուրքիայի սահմաններում Թուրքիայի ու Հայաստանի փոխադարձ շահերին համապատասխանող շուտափույթ արդարացի տարածքային սահմանագծումը Մերձավոր Արևելքում խաղաղության և կայունության գրավականներից մեկը կլինի, և Կովկասյան Հանրապետությունների ու նրանց միության դիմացկունությունը և կենսունակությունը այդ կարգավորումից է զգալիորեն կախված, որի նվաճմանը Կովկասյան Հանրապետությունները պատրաստ են ընդհանուր ջանքերով աջակցել:

VIII

Վստահ լինելով, որ Կովկասի դաշնային հանրապետությունների անկախության գործին արդեն միջազգային ակտերում ճանաչում գտած տերությունների բարոյական և քաղաքական աջակցությունն ապահովված է, այդ հանրապետությունների կառավարություններն արտասահմանյան պետությունների հետ, բացի քաղաքականից, նույնպես և առևտրական ու արդյունաբերական կապերի ամրապնդման ուղղությամբ և Կովկասի բնական հարստությունների մշակման գործում արտասահմանյան կապիտալի բեղմնավոր համագործակցության նպատակով իրենց մոտ պայմանների ստեղծման համար, համատեղ և ծրագրավորված կաշխատեն:

IX

Ամբողջ Մերձավոր Արևելքում կայուն խաղաղության և հանգստության համար Կովկասի անկախ Հանրապետությունների դաշնային միության անհրաժեշտության մեջ հաստատ համոզված լինելով՝ Հայաստանի, Ադրբեջանի, Վրաստանի և Լեռնական Հանրապետության Ներկայացուցիչները հայտարարում են, որ նրանց հետապնդած նպատակների իրականացումը հարևան տերությունների կողմից այդ հանրապետությունների անկախության և տարածքային ամբողջականության հարգման դեպքում է միայն հնարավոր, որ 1919, 1920 և 1921 թթ. Ռուսաստանի և Թուրքիայի զինված ուժերի կողմից այդ հանրապետությունների տարածքների բռնազավթումը նրանց իրավունքների աղաղակող ոտնահարում և հետագա ցնցումների աղբյուր է, և որ այդ ապօրինի բռնազավթման շուտափույթ դադարեցման և խանգարված կարգի վերականգնման համար դիվանագիտական ազդեցության միջոցներ պետք է կիրառվեն:

X

Դրա հետ մեկտեղ, Կովկասյան Հանրապետությունների ներկայացուցիչները հայտարարում են, որ ի վնաս առաջինների՝ հարևան տերությունների կողմից կնքված իրենց պետությունների տարածքների զիջմանը վերաբերող բոլոր պայմանագրերն ու համաձայնագրերը և Հայաստանում, Ադրբեջանում, Վրաստանում և Լեռնական Հանրապետությունում այդ հանրապետությունների ժողովուրդների կամքի ազատ դրսևորման վրա չհիմնված իշխանությունների, խմբերի կամ կազմակերպություններից որևիցե մեկի կողմից տրված ցանկացած կոնցեսիա և արտոնություն զուրկ է որևէ օրինական ուժից և չպետք է ճանաչվի:

Հայկական Հանրապետության Պատվիրակության Նախագահ՝

Ա. Ահարոնյան

Ադրբեջանական Խորհրդարանի նախագահ և Խաղաղության Պատվիրակության Նախագահ՝

Ա. Թոփչիբաշև

Հյուսիս-Կովկասյան Հանրապետության Դիվանագիտական Առաքելության Նախագահ՝

Ա. Չերմոն

[Վրաստանի] Արտակարգ Դեսպանորդ և Լիազոր Նախարար՝

Ա. Չխենկելի

ՀԱԱ, ֆ. 1435, ց. 3, գ. 28, թթ. 35-38: Վավերացված պատճեն: Մեքենագիր: Թարգմանություն ռուսերենից:

ԹԻՎ 4

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Չորս հանրապետությունների՝ ԱՐԲԲԶԱՆԻ, ՀԱՅԱՍՏԱՆԻ, ԼԵՌՆԱՎԱՆՆԵՐԻ և ՎՐԱՍՏԱՆԻ Ներկայացուցիչների նիստի, 1921 թ. մայիսի 30, ցերեկվա ժամը 4-ին, Հայաստանի Պատվիրակության նստավայրում:

Ներկա էին՝ Ադրբեջանի Հանրապետության (Ա. Մ. ք. ԹՈՓՉԻԲԱՇԵՎ, Ա. Ա. ՇԵՅՆ-ՈՒԼ-ԻՍԼԱՄՈՎ, Մ. ՄԱՀՆՈՒՄՈՎ, Դ. ք. ՀԱԶԻԲԿՈՎ, Ա. ք. ԱԹԱՄԱԼԻԲԵԿՈՎ), Հայաստանի Հանրապետության (Ա. ԱՀԱՐՈՆՅԱՆ, Ա. ԽԱՏԻՍՅԱՆ, Գ. ԲԱՍՏՐՄԱԶՅԱՆ²¹, գեն. ԿՈՐԳԱՆՈՎ²², Տ. ԲԵԿԶԱՐՅԱՆ), Վրաստանի Հանրապետության (Ն. Ն.

21 Արմեն Գարո:

22 Կորգանով Գաբրիել Գրիգորի (3.05.1880, Թիֆլիս – 8.01.1954, Փարիզ): Առաջին աշխարհամարտի տարիներին եղել է Կովկասյան ռազմաճակատի շտաբի պետի տեղակալ: Եղել է Փարիզի վեհաժողովում Հայաստանի առաջին Հանրապետության պատվիրակության ռազմական խորհրդական:

ԺՈՐԳԱՆԻԱՅ²³, Ա. Ի. ՉԻՆԿԵԼԻ²⁴, Ե. Պ. ԳԵԳԵՉԿՈՐԻ, Ն. ՉԻՆԻՉԵ, Ն. ՌԱՄԻՇՎԻԼԻ, Գ. ՎԵՇԱՊԵԼԻ), Լեռնականների Հանրապետության (Գ. ՉԵՐՄՈՆՎ) ներկայացուցիչները:

Նախագահ Ա. Ի. ԽԱՏԻՍՅԱՆԸ, բացելով նիստը, հայտարարեց, որ հավաքի նպատակն առաջին հերթին այն ընդհանուր հռչակագրի բովանդակության քննարկումն ու մշակումն է, որը Կովկասի չորս հանրապետությունների ներկայացուցիչները պետք է ստորագրեն, դրա փոխանցման եղանակը որոշեն և մեր համատեղ աշխատանքի բնույթը նախանշեն, և հավաքին զեկուցեց այն երկու գրությունների մասին, որոնք այդ առթիվ Վրացական և Ադրբեջանական Պատվիրակություններից ստացվել են Հայկական Պատվիրակությունում:

Նախքան համաձայնության հիմունքների մասին հարցի վերջնական քննարկմանն անցնելը, համաձայն որոշ ներկայացուցիչների արտահայտած ցանկության, Ե. Պ. ԳԵԳԵՉԿՈՐԻՆ հավաքին հակիրճ ծանոթացնում է այն նախնական աշխատանքների հետ, որոնք այդ հարցի շուրջ մի շարք նիստերում Ադրբեջանական, Վրացական և Լեռնականների Հանրապետությունների Ներկայացուցիչներն արել են, և այն եզրակացությունների հետ, որոնց նրանք հանգել են: Հիմնական միտքը, որը մեզ պետք է առաջնորդի, այն է, որ մինչ այժմ տարբեր բնույթի կողմնորոշում ունեցող Կովկասյան ժողովուրդներն այսուհետ պետք է մի կողմնորոշում ունենան՝ հույսն իրենց վրա դնեն, առաջնորդվելով, Կովկասը – Կովկասի ժողովուրդների համար սկզբունքով:

Վերջին երեք նիստերում՝ Հայկական Պատվիրակության հետ համատեղ, մանրամասնորեն հարցադրվել և քննարկվել են այն բոլոր հիմունքները, որոնց վրա պետք է մեր չորս Հանրապետությունների միասնությունը ստեղծվի: Այդ հիմունքները՝ երեք հանրապետությունների առաջարկությամբ, պետք է լինեն հետևյալը.

1. Մեր հանրապետությունների անկախության պաշտպանության համար ռազմապաշտպանական միություն,

2. Այդ նույն նպատակի համար մեր դիվանագիտական և քաղաքական ջանքերի միասնություն,

3. Մաքսային միության տեսքով արտահայտված մեր տնտեսական ջանքերի միասնություն:

Ներկա հավաքին մնում է այդ հարցը կրկին քննարկել և այս կամ այն վերջնական որոշումն ընդունել:

Ռուսաստանի և Թուրքիայի նկատմամբ հարաբերություններում Կովկասի Հանրապետությունների Միությունն այն բանից պետք է ելնի, թե ինչքանով այդ հարևան պետությունների քաղաքականությունը համբերատար կամ թշնամաբար է վերաբերվում այդ հանրապետությունների անկախությանը, և դրան համապատասխան՝ իրենց մարտավարությունը համակարգել, իրենց դեմ ուղղված ցանկացած թշնամական ելույթից խուսափելով:

Ինչ վերաբերում է Հայկական հարցին, ապա երեք հանրապետությունների ներկայացուցիչները միանգամայն հասկանում են այն առանձնահատուկ դրությունը, որում Հայկական Պատվիրակությունը գտնվում է Թուրքական Հայաստանի մասին հարցի առնչությամբ, և որը ստիպում է նրան Միության մասին առաջարկությանը որոշակի վերապահությամբ վերաբերվել: Նրանք հայտարարել են և այժմ էլ հայտարարում են, որ Հայկական հարցի արդարացի լուծումը ոչ միայն հայոց, այլև ողջ Միության գործն է, որը պետք է այժմ ստեղծվի: Դա համակրանքի հարց չէ, այլ խիստ հաշվարկի, քանզի Միություն չի կարող լինել այնտեղ, որտեղ նրա անդամ-

23 Ժողդանիա Նոյ Նիկոլայի (1869–1953): 1918 թ. ապրիլից՝ Անդրկովկասյան Սեյմի կառավարության նախագահ, հուլիսից՝ Վրաստանի վարչապետ:

24 Չինսկելի Ակակի Իվանի (1874–1959): 1918 թ. մայիս-նոյեմբերին եղել է Վրաստանի արտաքին գործերի նախարար, 1921–1933 թթ.՝ Վրաստանի դեսպանը Ֆրանսիայում:

ներից մեկն է նորմալ զարգանում*։ Այդ պատճառով, երեք Հանրապետությունների ներկայացուցիչները կարծում են, որ այս կամ այլ ճանապարհով այդ Միության մասնակիցները պետք է ամեն մի միջոց ընդունեն, որպեսզի Հայկական հարցը հայտնի լուծում ստանա՝ չկանխորոշելով այդ լուծման ձևերը։

Երեք Հանրապետությունների պատվիրակությունների նախորդ աշխատանքի մասին այդ համառոտ գեկույցը լսելուց հետո ՆԱԽԱԳԱՀԸ Հավաքին առաջարկում է ձեռնամուխ լինել համաձայնության հիմնական կետերի մշակմանը։

ՆԱԽԱԳԱՀԸ մի շարք գլխավոր հարցեր է առաջադրում, որոնց պարզաբանումն ու կարգավորումը Միության կազմակերպման հաջողության համար այժմ անհրաժեշտ է։

Նոր հարց – ստեղծվելիք կազմակերպության բնույթի մասին։ Մտքերի փոխանակումից հետո Հավաքը հաստատում է, որ տվյալ դեպքում ոչ թե կոնֆեդերացիայի, այլ Կովկասի անկախ Հանրապետությունների միության մասին է խոսքը գնում։ Այդ Միությունը հիմնական նպատակ ունի հանրապետությունների անկախության պաշտպանությունը և իր բնույթով պաշտպանական միություն է։ Ապա, նա նպատակ ունի ըստ ամենայնի դյուրացնել Հանրապետությունների միջև տնտեսական հարաբերությունները, ինչի համար ստեղծվում է Մաքսային միություն։ Արտաքին հարաբերությունների առնչությամբ Միությունը բոլոր չորս հանրապետությունների շահերի պաշտպանություն նկատի ունեցող համատեղ ելույթներին փոխադարձ աջակցություն է նախատեսում։ Ինչ վերաբերում է Միության առանձին անդամներին, ապա նրանք իրենց արտաքին հարաբերություններում ազատ են մնում, բայց չպետք է ձեռնարկեն ոչ մի քայլ, որը միության կամ նրա առանձին անդամների ընդհանուր շահերին դեմ է գնում։ Իրենց սահմանային վեճերի լուծման գործում անդամները պարտավորություն են ստանձնում ենթարկվել արբիտրաժի որոշմանը։ Ինչ վերաբերում է Ռուսաստանի և Թուրքիայի նկատմամբ վերաբերմունքին, ապա Միության անդամները նրանց նկատմամբ ոչ մի ագրեսիվ ակտեր չեն նախատեսում, մասնավորապես՝ Ռուսաստանի նկատմամբ Միությունը ձեռնարկում է բոլոր միջոցները նրա կենսական պահանջմունքների բավարարման համար։

Հայկական հարցի առնչությամբ Միության անդամները բոլոր միջոցներով ամբողջության մեջ այդ հարցի արդարացի լուծմանը նպաստելու իրենց նպատակ են առաջադրում, այսինքն՝ նախկին Թուրքական Հայաստանի տարածքի նկատմամբ Հայաստանի պահանջների բավարարման իմաստով։

Հավաքը վերոնշյալ կետերից անհրաժեշտ է գտնում հռչակագրի մեջ ներառել հետևյալը.

Ստեղծվում է Կովկասի անկախ Հանրապետությունների Միություն, որը հաստատում է. 1. Միության սահմանների պաշտպանության համար ռազմապաշտպանական միություն, 2. Մաքսային միություն, և 3. Իրենց տարածքային հարցերի լուծման համար արբիտրաժը որպես ճանապարհ, հատուկ հավելմամբ, որ Թուրքիայի սահմաններում Հայկական հարցի լրիվ լուծումը Միության անհրաժեշտ պայման է։

Դրանից հետո ՆԱԽԱԳԱՀԸ հռչակագրի կազմման ձևի մասին երկրորդ հարցն է քննարկման դնում։ Այդ առթիվ՝ հռչակագրի հրապարակման և նրա տեսքի հարցն է առաջ քաշվում։ Ապա առաջադրվում է հարց այն մարմնի մասին, թե ով պետք է ներկա Հավաքի որոշումները իրագործի, և ընդհանրապես՝ ստեղծվող Միության ժամանակավոր գործադիր մարմին դառնա։ Հավաքը որոշում է Կովկասի Հանրապետությունների Ներկայացուցիչների Խորհուրդ անվամբ այդպիսի մարմին ձևավորել։

Այդ Խորհրդի վրա դրվում է. 1. Հնարավոր մոտ ժամկետում հռչակագրի նախագիծ կազմել և այն Հավաքի հավանությանը ներկայացնել, 2. Նախանշել այն համատեղ քայլերի նախագիծը, որոնք Հանրապետությունների Միության ստեղծ-

*Տեքստում այսպես է գրված։

ման առթիվ հարկավոր է ձեռնարկել և միննույն ժամանակ Միության իրազեկման և կարգադրիչ մարմնի պարտականություններ իրականացնի՝ այն հարցերի առթիվ, որոնք գործի ընթացքում կծագեն, և 3. Անհրաժեշտության դեպքում Հանրապետությունների Պատվիրակությունների ընդհանուր Հավաքներ գումարել:

Խորհրդի կազմում նշանակվում են յուրաքանչյուր հանրապետության ներկայացուցչությունից մեկական անդամ. պպ. Ա. Ի. ՉԽԵՆԿԵԼԻՆ, Ա. Մ. Բ. ԹՈՓՉԻԲԱՇԵՎԸ, Ա. Բ. ՉԵՐՄՈՆԵՎԸ և Ա. ԱՀԱՐՈՆՅԱՆԸ:

Նախագահ՝ Ա. Ի. ԽԱՏԻՍՅԱՆ
Քարտուղար՝ Հայկական Պատվիրակության քարտուղար Հ. ՔՈՉԱՐՅԱՆ

ՀԱԱ, ֆ. 1435, ց. 3, գ. 28, թթ. 1-3: Վավերացված պատճեն: Մեքենագիր: Թարգմանություն ռուսերենից:

ԹԻՎ 5

ՀԱՅԱՍՏԱՆԻ, ԱԴՐԲԵՋԱՆԻ, ՎՐԱՍՏԱՆԻ ԵՎ ԼԵՆԻՆԱԿԱՆ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉՆԵՐԻ ԳՐՈՒԹՅՈՒՆԸ ՖՐԱՆՍԻԱՅԻ
ՎԱՐՉԱՊԵՏԻՆ ՕԳՆՈՒԹՅԱՆ ԽՆԴՐԱՆՔՈՎ

Փարիզ, 1921 թ. օգոստոսի 11
Պարոն Նախագահ²⁵,

Սույն թվի հունիսի 10-ին Կովկասի չորս հանրապետությունները՝ Հայաստանը, Ադրբեջանը, Հյուսիսային Կովկասը և Վրաստանը, Փարիզում ակտ ստորագրեցին, որի համաձայն նշյալ հանրապետություններն իրենց միջև միաժամանակ քաղաքական և տնտեսական նպատակով Միություն ձևավորեցին:

Որպեսզի կյանքում մեր Միության նպատակն իրականացվի, վերոնշյալ Հանրապետությունների ներկայացուցիչներս այն բանից հետո, երբ համատեղ նախաձեռնեցինք որոշ քաղաքական քայլեր, ինչպես նաև մեր մաքսային միության կազմակերպման մանրամասները՝ ողջ Կովկասի վրայով ազատ տարանցիկի պայմանները և այն քննարկելով, միաժամանակ զբաղվեցինք մեր Հանրապետությունների շտապ կարիքների բավարարման համար միջոցների փնտրտուքով, որպեսզի դրանք քաղաքական և տնտեսական ամրապնդման համար հիմք կարողանային ծառայել:

Նկատի ունենալով այն համակրանքի զգացմունքները, որոնք Ֆրանսիան մեր ժողովուրդներին վկայել է և այն զրույցի հիմա վրա, որն օգոստոսի 3-ին մենք պատիվ ենք ունեցել Ձերդ Գերազանցության հետ ունենալ, մենք թույլ ենք տալիս մեզ Ձերդ Գերազանցությանն այդ կարիքներին և միջոցներին վերաբերող առդիր կցված զեկույցը²⁶ ներկայացնել, որոնք Ձեր կարծիքով կարող են դրանք բավարարել:

Կից զեկույցում նշված արտասահմանյան կապիտալի աջակցությունը, երկրի ռեսուրսների շահագործման համար գիտելիքները և փորձը Կովկասի տնտեսական կյանքի բարելավման վրա ոչ միայն կազդի, ծախսված ջանքերը և ներդրված կապիտալը ոչ միայն հարյուրապատիկ կհատուցվի, այլև Կովկասի Դաշնային Հանրապետություններին կթույլատրի իրականացնել այն պարտականությունները, որոնք նրանց վրա նախկին Ռուսական կայսրության պարտքերի բաշխման ժամանակ կընկնեն:

Կից զեկույցում ներկայացված ծրագրի իրականացման համար ֆրանսիական կապիտալի մասնակցության հարցում մենք պատիվ ունենք Ձերդ Գերազանցությանն աջակցությունը խնդրել:

Մենք համոզված ենք, որ մեր երկրում լայնորեն շահագրգռված ֆրանսիական կապիտալն այն երաշխիքների ներքո, որոնք մենք պատրաստ ենք նրան ապահովել,

²⁵ Նկատի ունեն Ֆրանսիայի կառավարության նախագահ Արիստիդ Բրիանին:

²⁶ Նշյալ կից զեկույցի տեքստը չի պահպանվել:

մեր Հանրապետությունների, նրանց Միության և Ֆրանսիայի միջև սերտ կապերի հաստատմանը կնպաստի և մեզ իրավունք կտա արդարացի սահմաններում Կովկասի Հանրապետությունների անկախության ամրապնդման համար Ֆրանսիական կառավարության իրական քաղաքական օգնության վրա հույս դնել:

Ընդունեցեք....

ՀԱԱ, ֆ. 1435, ց. 3, գ. 28, թ. 53: Վավերացված պատճեն: Մեքենագիր: Թարգմանություն ռուսերենից:

ԹԻՎ 6

ՖՐԱՆՍԻԱՅԻ ԱՐՏԳՈՐԾՆԱԽԱՐԱՐ ԲՐԻՄՆԻ ԳՐՈՒԹՅՈՒՆԸ ԿՈՎԿԱՍՅԱՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅԱՆ ՑՈՒՑԱԲԵՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Արտաքին Գործերի Նախարարություն
ՖՐԱՆՍԻԱԿԱՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
Քաղաք.[ական] Տնօրենություն
Ասիա-Օկեանիա
Պարոն Նախարար,

Օգոստոսի 11-ի նամակով, որը Դուք Հայաստանի, Ադրբեջանի և Հյուսիսային Կովկասի Պատվիրակությունների պա. Նախագահների հետ համատեղ սիրալիք ինձ էիք ուղարկել, Դուք ինձ այն պայմաններին էիք տեղյակ պահում, որոնցից Ֆրանսիայի ֆինանսական օգնությամբ Կովկասի Հանրապետությունները կարող են օգտվել:

Ձեզ այդ հաղորդման ստացման մասին տեղեկացնելով, ես պատիվ ունեմ Ձեզ հայտնել, որ [Ֆրանսիայի] Հանրապետության Կառավարությունը մեծ համակրանքով կհետևի այն ջանքերին, որոնք Կովկասում տնտեսական պայմանների բարելավման համար այդ չորս Կառավարությունները կկատարեն:

Սակայն ձիշտ կլինեք, որպեսզի Դուք անձամբ ֆրանսիական ֆինանսական շրջանակներում քայլեր կատարեիք, որոնք, Ձեր կարծիքով, Ձեզ անհրաժեշտ աջակցություն կարող էին տալ: Այն բանից հետո, երբ Դուք այն երկրի շահագործման համար բանկերի և մասնավոր արդյունաբերական ձեռնարկությունների հետ պլան մշակեք, որոնք Դուք ներկայացնում եք, ես կփորձեմ այդ հաստատությունների հետ Ձեր համաձայնության նպաստման համար Ձեզ ողջ ցանկալի աջակցությունը ներկայացնել:

Խնդրում եմ ընդունեք....
Բրիան²⁷

ՀԱԱ, ֆ. 1435, ց. 3, գ. 28, թ. 34: Վավերացված պատճեն: Մեքենագիր: Թարգմանություն ռուսերենից:

ԹԻՎ 7

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Կովկասյան չորս հանրապետությունների ներկայացուցիչների կողմից ազատագրված շրջանների նախարար պ. ԼՈՒՇԵՐԻՆ այցելության

[1921 թ.] Նոյեմբերի 7-ին, նախարարության շենքում, Կովկասյան չորս հանրապետությունների՝ Հայաստանի, Ադրբեջանի, Վրաստանի և Հյուսիսային Կովկասի, Ներկայացուցիչներն ազատագրված շրջանների նախարար պ. Լուշերի կողմից ընդունվեցին:

Ընդունելով պատվիրակներին՝ պ. Լուշերը հայտարարեց, որ Նախարարների

27 **Բրիան Արիստիդ** (1862–1932): 1909–1911, 1913, 1915–1917, 1921–1922, 1925–1926, 1929 թթ. եղել է Ֆրանսիայի վարչապետը:

Խորհրդի Նախագահ պ. Բրիանը Վաշինգտոն մեկնելով՝ իրեն հանձնարարել է ֆրանսիական կառավարությանը չորս պատվիրակությունների կողմից ներկայացված քաղաքական ցանկությունները և տնտեսաֆինանսական կարիքներն ու առաջարկները ներկայացնող գրությունը ուսումնասիրել, դրանում շարադրված հարցերով զբաղվել և Նախարարների Խորհրդին ներկայացնելու համար զեկույց պատրաստել: Նա Լուշերը, գրությունների հետ ծանոթացել է և պատվիրակություններին խնդրում է ներկայացված գրություններից բխող հարցերի շարադրանքի ձեռնարկել:

Այդ հրավերից հետո պ. Չլենկելին հայտարարեց հետևյալը. «Մենք մեր հայտարարությունների հանդեպ ցուցաբերված ուշադրության համար շատ շնորհակալ ենք ու նախ և առաջ պետք է այն բանի վրա Ձեր ուշադրությունը հրավիրենք, որ թեպետ մեր երկրները բոլշևիկյան ուժերի և քեմալականների ժամանակավոր բռնազավթման տակ են գտնվում, սակայն բոլշևիկյան կառավարությունների տիրապետությունը բնակչության համակրանքի վրա ոչ մի կերպ չի հենվում, այլ՝ բացառապես սրերի կոպիտ ուժի: Մենք չենք կասկածում, որ մեր ժողովուրդների օգնությամբ և Ֆրանսիայի ու այլ Ալլիենների²⁸ բարյացակամ վերաբերմունքով ազգային կառավարությունները կրկին իրենց ժողովուրդների գլխին կկանգնեն»:

ԼՈՒՇԵՐ: Ֆրանսիան Կովկասյան Հանրապետություններին բարյացակամ է վերաբերվում: Մինչդեռ, թվում է, որ Վրաստանում սոցիալիստական կառավարություն էր²⁹:

ՉԽԵՆԿԵԼԻ: Մենք պետք է ընդգծենք, որ մեր ժողովուրդները և կառավարման ձևերը խորապես դեմոկրատական են ու գիտակից դեմոկրատիայի և սոցիալիզմի խնդիրներ են հետապնդում, սակայն մասնավոր սեփականության սկզբունքները, արտասահմանցիների իրավունքները հարգում են և համաձայն են ժուսական պարտքերի և միջազգային պարտավորությունների Կովկասյան Հանրապետությունների վրա ընկնող մասնաբաժինները ձանաչել:

ԼՈՒՇԵՐ: Հատկապես Ձեր շարադրած սկզբունքները հարգող սոցիալիստական կուսակցությունների անդամներից բաղկացած կառավարությունների դեմ մենք ոչինչ չունենք: Անցնելով մեր առջև դրված հարցերին՝ պարզ է, որ դրանք բաժանվում են երկու կարգի. ես տնտեսական և ֆինանսական հարցերի մասին եմ խոսում: Դրանցից մեկը բոլշևիկյան իշխանության ապագա տասպաման ժամանակին է վերաբերում, իսկ մնացածը՝ տապալումից հետո եղած ժամանակին: Սակայն, մինչև Հանրապետություններում նոր իշխանության³⁰ դուրս շարտումը՝ ոչ հաղորդակցության ուղիների զարգացումը, ոչ էլ բնական հարստությունների շահագործումը հնարավոր չէ: Ըստ այդմ, ես ենթադրում եմ, որ մեր առջև առկա է հարցերի երեք խումբ. 1. Կովկասի չորս Հանրապետությունների Ներկայացուցիչները օրինական և ժողովրդական իղձերին համապատասխանող իշխանության հաստատման գործում զենքի, դրամի և հանդերձանքի առումով Ֆրանսիայից ինչ տեսակ աջակցություն են սպասում, 2. Ինչո՞վ կարող է Ֆրանսիան սկզբնական ժամանակ բոլշևիկներից Հանրապետությունների ազատագրմանը Կովկասյան Հանրապետությունների մշակութաարդյունաբերական վերածննդին նպաստել, հատկապես՝ հաղորդակցության ուղիների, էմիսիոն բանկի, չորս հանրապետությունների համար միասնական դրամական համակարգի, նավթամուղների և բնական հարստությունների շահագործման համար, նկատի ունենալով, որ Ֆրանսիան կարող է գլխավորապես նյութերով, մեքենաներով, զենքով և մասնակիորեն գումարով օգնության գալ, սակայն ենթադրում եմ՝ ոչ ավելի, քան մեկ միլիոն ֆրանկ, 3. Կովկասյան Հանրապետություններն ինչպիսի՞ հատուցում և ինչպիսի՞ արժեքներ արտարժույթով և հում նյութերով, հումքերով կամ ընդհանրապես մթերքներով կարող են սկզբնական ժամանակ տրամադրել այն օգնության դիմաց, ինչպիսին Կովկասյան Հանրապետություններին Ֆրանսիան կկա-

28 Եվրոպական դաշնակից-տերություններ:

29 Նկատի ունի Վրաստանի մենշևիկյան կառավարությունը:

30 Նկատի ունի բոլշևիկներին:

րողանա ցուցաբերել:

Ձեր մոտ կարծես թե մարզանեց էլ կա³¹:

Ես ենթադրում եմ, որ թվերով և գումարով արտահայտված այդ հարցերի պատասխաններն այն զեկույցի բովանդակությունն են կազմում, որն ինձ պ. Բրիանը հանձնարարել է կազմել: Ի դեպ նկատեմ, որ ես այդ աշխատանքը ոչ թե ազատագրված շրջանների նախարարի պաշտոնի բերումով եմ կատարում, այլ Նախարարների Խորհրդի Նախագահի հատուկ խնդրանքով: Իսկ կարող եք հենց հիմա Ձեզ անհրաժեշտ թվեր և գումարներ ասել:

ՊԱՏՎԻՐԱԿՆԵՐ: Մենք ենթադրում ենք, որ Դուք քննարկման ենթակա հարցերը միանգամայն իրավացի ձևակերպեցիք: Մենք մասնագետների և փորձագետների կողմից դրանց քննարկումից հետո այդ հարցերին պատասխաններ կտանք: Հավանաբար, Դուք ձեր կողմից համապատասխան մասնագետների կիրավիրեք: Այժմ քիչ թե շատ հստակ թվեր դժվարանում ենք ասել: Հարկավոր է հաշվարկներ և նախագծեր կազմել:

ԼՈՒՇԵՐ: Ինչ վերաբերում է մասնագետներին, ապա մենք նշանակել ենք: Նրանք կլինեն ինչպես Ձեր կողմից՝ մի քանիսը, չորս գլխավոր թեմաների շուրջ. ռազմական մասնագետ, ֆինանսատնտեսական, նավթային գործի և հաղորդակցության ճանապարհների:

Դուք հարցերի նախնական ձև կազմեցեք և 5-6 օր հետո ինձ ուղարկեք, որպեսզի մասնագետները պարզաբանման ենթակա հարցերի ոլորտ կարողանան մտնել, և Ձեր փորձագետների ցուցակը տվեք, քանի որ մենք Անգլիայի հետ համատեղ պետք է աշխատենք, որովհետև ես ընդհանրապես անգլո-ֆրանսիական համագործակցությանը կողմ եմ:

ՉԵՐՄՈՆԵՎ: Ես պետք է Ձեր ուշադրությունն այն բանի վրա հրավիրեմ, որ այսպես կոչված ռուսական նավթի 95 տոկոսը Գրոզնի-Բաքու շրջաններից է ստացվում և ինքը Անգլիան 1/2 տարվա ընթացքում նավթը Ադրբեջանական կառավարությունից էր գնում և այդպիսով այդ աղբյուրների սկստմամբ Ադրբեջանի Հանրապետության սեփականության իրավունքները ձանաչում էր, և եթե բռնագավթիչ ուժերի³² հեռացումից հետո նավթամուղն անհապաղ ուղղեք, ինչը կտևի ոչ ավել, քան երեք ամիս և 100.000 ֆրանկ, ապա առաջին հերթին Բաթումից կարելի է նավթ ստանալ:

ՉԻԵՆԿԵԼԻ: Ես պետք է Ձեր ուշադրությունն այն բանի վրա հրավիրեմ, որ մենք կարող ենք տարբեր «ռեժիմ»-ով³³, մաքսային եկամուտներով, երկաթգծից եկամուտներով Ձեր ծախսերը երաշխավորել:

ԽԱՏԻՍՈՎ: Հարկավոր է այն բանի վրա ուշադրություն դարձնել, որ բացի զուտ պետական հարստություններից, մենք կարող ենք և մասնավոր սեփականատերերի ու արտադրողների և Ֆրանսիայի Կառավարության ու կապիտալիստների միջև միջնորդ լինել, քանի որ մասնավոր սեփականատերերն իհարկե պետք է իրենց կառավարությունների հրահանգներով ղեկավարվեն: Մենք շատ ուրախ ենք, որ Դուք անգլիացիների և ամերիկացիների հետ համատեղ եք ցանկանում աշխատել, դա միջազգային համագործակցությանն ամուր բնույթ է տալիս, ինչն օտար ռազմական բռնագավթումից մեր երկրների ազատագրմանը կուղղորդվի:

ԼՈՒՇԵՐ: Այսպիսով, հարցը հստակ է դրված՝ մեզ հստակ հաշվարկ է անհրաժեշտ: Թվեր և տվյալներ են հարկավոր: Ընդհանուր պլանը նախագծված է: Աշխատանքի ձեռնարկենք: Երբ Ձեր ցանկությունները շատ հստակ ձևեր և տվյալներ դառնան, մենք Ձեզ հետ էլի կհանդիպենք:

Ուշադրության համար շնորհակալություն հայտնելով և պ. Լուշերից լսելով, որ իրենց Նախարար-Նախագահի և Պատվիրակությունների միջև կապի համար գնդ.

31 Նկատի ունի Վրաստանին:

32 Նկատի ունի բոլշևիկներին:

33 Օտարերկրյա պետական կամ մասնավոր ընկերություններին տրվող բացառիկ արտոնություններ:

[ապետ] Մուժենն է նշանակվել, խորհրդակցությանը ներկա պատվիրակները պ. նախարարին հրաժեշտ տվեցին:

ՀԱԱ, ֆ. 1435, ց. 3, գ. 28, թթ. 39-40: Վավերացված պատճեն: Մեքենագիր: Թարգմանություն ռուսերենից:

Թիվ 8

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Կովկասյան չորս Հանրապետությունների Ներկայացուցիչների Խորհրդի նիստի, 1921 թ. նոյեմբերի 9, Հայկական Պատվիրակության նստավայրում:

Ներկա էին՝ ԽԱՏԻՍՅԱՆ, ՓԱՓԱԶՅԱՆ³⁴, ԿՈՐԳԱՆՅԱՆ (Հայաստան), ԹՈՓՉԻԲԱՇԵՎ (Ադրբեջան), ՉԻՆՏԿԵԼԻ, ԱՎԱԼՈՎ³⁵, ԿԱՆԴԵԼԱԿԻ (Վրաստան), ՉԵՐՄՈՆՎ (Հյուսիսային Կովկաս):

1. ԽԱՏԻՍՅԱՆԸ Խորհրդին հաղորդում է այն հանդիպման մասին, որ ունեցել են նոյեմբերի 7-ին [Ֆրանսիայի] ազատագրված մարզերի նախարար պ. ԼՈՒՇԵՐԻ հետ:

Որոշ ոչ մեծ ուղղումներից հետո Խորհրդի կողմից հաշվետվությունն ընդունվեց:

2. ՆԱՄԱԳԱՀԻ առաջարկությամբ Խորհուրդը որոշեց մասնագետների չորս հանձնաժողովներ նշանակել, որոնք չորս Հանրապետությունների կարիքների մասին ընդհանուր զեկույցի կազմման համար նյութեր պետք է նախապատրաստեն:

Հանձնաժողովների աշխատանքների ընդհանուր ղեկավարումը հանձնարարվեց Վրաստանի նախկին նախարար պ-րն ԿԱՆԴԵԼԱԿԻԻՆ:

Խորհուրդը որոշեց հանձնաժողովների հետևյալ կազմը.

1. Ռազմական հանձնաժողով. Հայաստան (գեներալ ԿՈՐԳԱՆՈՎ), Ադրբեջան (գեներալ ԱՂԱԲԵԿՈՎ), Վրաստան (ՄԴԻՎԱՆԻ), Հյուսիսային Կովկաս (գեներալ ԽԱԳՈՆԴՈԿՈՎ):

2. Ֆինանսատնտեսական հանձնաժողով. Հայաստան (ԲԵՐԲԵՐՅԱՆ), Ադրբեջան (ՄԱՀԵՌՈՒՄՈՎ), Վրաստան (ԷԼԻԳՈՒԼԱՇՎԻԼԻ), Հյուսիսային Կովկաս (ԶԱԲԱԳԻ),

3. Նավթարդյունաբերության հանձնաժողով. Հայաստան (ԲԵԿՋԱԴՅԱՆ), Ադրբեջան (ՍԵԼԻՄԻԱՆՈՎ կամ ՍԱԼԻՄՈՎ), Վրաստան (ԷԼԻԳՈՒԼԱՇՎԻԼԻ), Հյուսիսային Կովկաս (ԶԱԲԱԳԻ),

4. Հաղորդակցության ճանապարհների հանձնաժողով. Հայաստան (ՏԵՐ-ՄԻՔԱՅԵԼՅԱՆ), Ադրբեջան (ՎԵՔԻԼՈՎ), Վրաստան (Մ. Ն. ԶՈՒԲԱԼՈՎ), Հյուսիսային Կովկաս (Ի. Բ. ՀԱՅԴԱՐ):

Խորհուրդը խնդրում է պ. ԿԱՆԴԵԼԱԿԻԻՆ նախապատրաստել աշխատանքի նախնական պլան և վերջին հանդիպման ժամանակ պ-րն ԼՈՒՇԵՐԻ կողմից առաջադրված երեք գլխավոր հարցերից թխող հարցերի մանրամասն ցանկ:

Այդ նպատակով ձևավորվել է հանձնաժողով հետևյալ անձանցից՝ պպ. ԲԵՐԲԵՐՅԱՆ, ԶԱԲԱԳԻ, ՄԱՀԵՌՈՒՄՈՎ՝ պ. ԿԱՆԴԵԼԱԿԻԻ նախագահությամբ:

Խորհուրդը խնդրում է պ-րն ԿԱՆԴԵԼԱԿԻԻՆ զեկույցն ինչքան հնարավոր է շուտ պատրաստել:

Նիստը փակվում է ժամը 7-ին:

Նախագահ՝ Ա. ԽԱՏԻՍՅԱՆ
Քարտուղար՝ ՔՈՉԱՐՅԱՆ

34 Փափազյան Վահան (Կոմս) (1876-1973): Փարիզի վեհաժողովում ՀՀ պատվիրակության անդամ: 1921 թ. Ռիգայում մասնակցել է բոլշևիկների հետ բանակցություններին:

35 Ավալիշվիլի (Ավալով) Զուրաբ (1876-1944): Փարիզի վեհաժողովում Վրաստանի պատվիրակության անդամ:

ՀԱԱ, ֆ. 1435, ց. 3, գ. 28, թթ. 51-52: Վավերացված պատճեն: Մեքենագիր: Թարգմանություն ռուսերենից:

ԹԻՎ 9

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Կովկասյան չորս Հանրապետությունների ներկայացուցիչների նիստի՝ Ռազմական և ֆինանսատնտեսական Հանձնաժողովների հետ համատեղ, 1921 թ. նոյեմբերի 16, կեսօրից հետո ժամը 4-ին, Լեռնականների Պատվիրակության նստավայրում:

Ներկա էին՝ ԹՈՓՉԻԲԱՇԵՎ, ՄԱՀԵՌՈՒԱՄՈՎ, գեն. ԱՂԱԲԵԿՈՎ (Ադրբեջան), ԽԱՏԻՍՅԱՆ, ՓԱՓԱԶՅԱՆ, գեն. ԿՈՐԳԱՆՈՎ (Հայաստան), ՉԻԵՆԿԵԼԻ, ՄԴԻՎԱՆԻ, ԿԱՆԴԵԼԱԿԻ (Վրաստան), ՉԵՐՄՈՆԵՎ, ԶԱԲԱԳԻ, գեն. ԽԱԳՈՆԴՈՎՈՎ (Հյուսիսային Կովկաս):

ՆԱԽԱԳԱՀԸ առաջարկում է քննարկել ռազմական հանձնաժողովի զեկույցը: ՄԴԻՎԱՆԻՆ առաջարկում է սկզբում քաղաքական կազմակերպության մասին հարցն առաջադրել:

ԹՈՓՉԻԲԱՇԵՎՆ առաջարկում է քաղաքական կազմակերպության մասին հարցին չանդրադառնալ և բացառապես ռազմական հանձնաժողովի զեկույցով զբաղվել:

ՄԴԻՎԱՆԻՆ իր հայտարարությունը պարզաբանում է և իր առաջարկի վրա պնդում:

Գեն.[երալ] ԽԱԳՈՆԴՈՎՈՎԸ ռազմական հանձնաժողովի զեկուցումն ամբողջությամբ ընթերցում է:

ՄԴԻՎԱՆԻՆ զեկույցին բացատրություններ և լրացումներ է հավելում:

ԿԱՆԴԵԼԱԿԻՆ նշում է, որ ծախսերի թվարկման ժամանակ ողջ նյութի տեղափոխման և տեղ հասցման արժեքը մոռացվել է, որ մենք նախատեսում ենք ստանալ:

ԹՈՓՉԻԲԱՇԵՎԸ քննարկման կարգով գտնում է, որ պետք է զեկույցը մանրամասնորեն քննարկել, մեզ առաջադրված հարցի վրա կանգ առնել, թե ինչպիսի միջոցներով ենք մենք ցանկանում նպատակին հասնել, ոչ թե ֆինանսի իմաստով, այլ գուտ ռազմական տեսանկյունից:

ԽԱՏԻՍՅԱՆԸ գտնում է, որ հարկավոր է զեկույցը բաժանել երեք կատեգորիաների՝ քաղաքական մաս, ռազմաքաղաքական մաս և տեխնիկական: Տվյալ նիստում հարկ է երկրորդ կատեգորիան քննարկել, ապա մանրամասն՝ իր տեսանկյունը: Հարց է տալիս՝ զեկույցի կազմման ժամանակ հանձնաժողովն ինչո՞վ է ղեկավարվել: Արդյո՞ք գործի նկատմամբ հույսն է այն ձևով, որով կազմվել է զեկույցը, կամ հանձնաժողովը միայն իրեն տրված խնդիրն է կատարել:

Գեն.[երալ] ԿՈՐԳԱՆՈՎԸ զեկույցի թվերի հետ համաձայնվում է, սակայն դեռևս իր կարծիքը զեկույցի մնացած մասի առնչությամբ չի կարող արտահայտել, քանի որ վերջին նիստում ներկա չի եղել և հայտարարում է, որ երբ խոսում են զինվորական հանձնաժողովի անունից, ապա իրեն պետք չէ նկատի ունենան:

ՆԱԽԱԳԱՀ: Կա երկու առաջարկ այն մասին, թե քննարկումն ինչպես սկսել՝ ռազմաքաղաքական, թե ռազմատեխնիկական մասերից:

ՉԵՐՄՈՆԵՎԸ գտնում է, որ ներկա նիստի հարց պետք է լինի անհրաժեշտ գումարի բաշխումը, որ այժմ հարկավոր է ունենալ, և որոնք հետագա կազմակերպչական աշխատանքի համար պետք կգան, այսինքն՝ վերոնշյալ երկու կատեգորիաների համար զեկույցի ռազմատեխնիկական մասի մեջ գումարների բաշխմամբ զբաղվել:

ՆԱԽԱԳԱՀ: Կիսելով պ. ԽԱՏԻՍՅԱՆԻ տեսակետը՝ այնուամենայնիվ առաջարկում է ռազմատեխնիկական մասով զբաղվել, որպեսզի դրանով ռազմական փորձա-

գետներին հնարավորություն տան իրենց աշխատանքը շարունակել, իսկ արդեն հետո՝ ինքներս ռազմաքաղաքական մասի մանրակրկիտ քննարկմամբ կզբաղվենք:

ՓԱՓԱԶՅԱՆ: Առաջարկվում է չորս հանրապետությունների բանակներ կազմակերպել: Որտեղի՞ց ռազմական հանձնաժողովը կադրերի համար բավական քանակի զինվորներ և սպաներ հույս ունի գտնել, հատկապես՝ վրացա-հայկական բանակի համար:

ՄԴԻՎԱՆԻՆ որպես պատասխան ցույց է տալիս, որ ռազմական հանձնաժողովն այդ հարցը չի քննարկել, այլ առաջադրանքը տեխնիկական տեսանկյունից է կատարել:

ՉԵՐՄՈՆՎՆ առաջարկում է ուղղակի զեկույցի տեխնիկական կողմի քննարկմանն անցնել:

ՓԱՓԱԶՅԱՆԸ հայտարարում է, որ առանց հարցի (զեկույցի 1-ին մաս) փիլիսոփայական կողմի քննարկման՝ թվեր չի կարելի հաստատել, այսինքն՝ առաջարկում է ամեն ինչ սկզբից ըստ կարգի քննարկել:

ԳԵՆ.[Երալ] ԿՈՐԳԱՆՈՎ: Դատելով զեկույցից՝ խոսքը բոլշևիկների դեմ պայքարի կազմակերպման մասին է գնում և դրա համար էլ սկզբում հարկավոր է այն միջոցները հաշվառել, որոնց բոլշևիկները տիրում են և այն, որ մենք կարող ենք անել, այսինքն՝ պայմանները, որոնցում հարկ կլինի աշխատել, որ հնարավոր չէ թվերի որոշմամբ զբաղվել:

ՄԱՀՆՌՈՒԱՄՈՎ: Յուրաքանչյուր տեխնիկական զեկույցի կազմման համար պետք է հայտնի մասշտաբ որոշվի:

ՉԵՐՄՈՆՎ: Մեզ հարկավոր է պատրաստ լինել այն պահին, երբ մենք կպայմանավորվենք և քաղաքական ու ռազմաքաղաքական մասերը կընդունենք, և դրա համար էլ այժմ հարկավոր է զեկույցի քաղաքական կողմով զբաղվել, սակայն վերապահումով, որ տեխնիկական մասի ընդունումը մեզ համար պարտադիր չէ, քանի դեռ առաջին երկու մասերը չեն ընդունվել: Առաջարկում ենք այդ առաջին երկու մասերն առայժմ պատվիրակություններում քննարկել, իսկ այժմ զեկույցի տեխնիկական կողմի քննարկմամբ զբաղվել:

ՄԴԻՎԱՆԻՆ ռազմական հանձնաժողովի անունից հայտարարում է, որ երբ մենք զեկույցի տեխնիկական կողմը մշակում էինք, ամենից վատթար պայմանները նկատի առանք, և այն որոշումը, որ միմիայն ապստամբություններով մենք երբեք ոչ մի բանի չենք հասնի, և որ անհրաժեշտ է ակտիվ ելույթի համար Կովկասի տարածքից դուրս որևէ տեղ նախապատրաստվել:

ԳԵՆ.[Երալ] ԱՂԱԲԵԿՈՎԸ նույնպես ռազմական հանձնաժողովի տեսակետն այնպես մանրամասն է պարզաբանում, ինչպես պ. ՄԴԻՎԱՆԻՆ:

Որոշվեց սկզբում վերջին մասը քննարկել:

Ընդմիջում $\frac{1}{4}$ ժամով:

Որոշվեց՝ վերացնել կետերի բոլոր անվանումները և միայն Հանրապետությունների անվանումները թողնել:

ՆԱԽԱԳԱՀՆ առաջարկում է կադրերը 2.700-ից 1.800-ի կրճատել:

ՄԴԻՎԱՆԻՆ պարզաբանում է, թե որտեղից է վերցված պ. ՆԱԽԱԳԱՀԻ կողմից առաջադրվող 1800 թիվը: Վրացական բանակում հետևակային գնդերը 3-ական գումարտակային կազմով էին, գումարտակում 3-ական վաշտով, 4-րդը՝ գնդացրային: Հաշվելով վաշտում 150 հոգի, այսինքն՝ 600 հոգի գումարտակում, մենք ստանում ենք 1.800 թիվ՝ հետևակային գնդի կազմը: Ժամանակին ողբալի արդյունքներ պարզվեցին, քանի որ հիվանդների վրա մարդկանց ծախսը և այլն հաշվի առնելով՝ վաշտերում 50-60-ական մարդ էր մնում:

ԽԱՏԻՍՅԱՆԸ Աջարիա թուրքերի ներխուժման պայմանների մասին է պատմում: Թուրքական կադրերն այն ժամանակ 1.400 հոգուց էին բաղկացած, որոնք ներխուժման ժամանակ գյուղերում էին բաշխված, որտեղ նրանց նախկին զինվորները պետք է միանային:

Նշելով, որ իրենց նահանջի ժամանակ ռուսական զորքերն ամեն ինչ այրեցին և ոչնչացրին, ապա շուտով և նահանջող թուրքերն իրենց հերթին նույն բանը կատարեցին, փաստում է, որ այս կամ այն կողմի հարձակման դեպքում կադրերը մնացին կադրեր և իրենց շուրջ ոչինչ չկարողացան հավաքել:

Ինդրում է ռազմական հանձնաժողովին երեք հարցի պատասխանել, թե ինչո՞ւ ռազմական հանձնաժողովը կանգ առավ 2.800 թվի վրա:

Նրա համար, որ մեծաքանակ զորք հույս չունեն հավաքել կամ էլ նա անբավարար միջոցների հետ է հաշվի նստել,

100.000 հոգանոց բանակի համար ծախսերի թիվը միայն պայքարի գործընթացի, թե նաև Կովկասում հետագա գործունեության համար է հաշվարկված,

Նախատեսվում է արդյոք բնակչության համար գաղտնի ճանապարհով զենքի հասցնում:

Գեն.[երալ] ԽԱԳՈՆԴՈԿՈՎ: 1. Իր անձնական ցանկությունն էր 5.000 հոգանոց կադրեր ունենալ: Փախստականների հարցումներից պարզվում է, որ անհրաժեշտ քանակի լեռնականներ և ադրբեջանցիներ կարելի է հավաքել: Ինչ վերաբերում է հայերին և վրացիներին, ապա և հայերը, և վրացիները կարող են կամավորների անհրաժեշտ քանակ ներկայացնել: Ցանկալի է ներխուժման դեպքում մեծ քանակ ունենալ, սակայն այս դեպքում ստիպված ենք ֆինանսական նկատառումներով ղեկավարվել: 2.000 թիվը ներխուժման կամ նվաճման համար անբավարար է: Սակայն, եթե տեղում հայտնի մթնոլորտ է ստեղծված, և քանի որ Ռուսաստանն այժմ չի կարող զորքի մեծ քանակ ներկայացնել, ապա, իհարկե, անգամ այդ փոքր կադրերի շուրջ պատկառելի զանգված կհավաքվի: 2. Եթե կադրը գնաց օր.[ինակ] Վրաստան և հավաքվեց 15 կամ 20.000 բանակի, ապա հենց այդտեղ և թիկունքի պահեստագործ կօգտագործվի: Այդ պահեստագործի ուժասպառ լինելու դեպքում տեղական պայմաններին ստիպված կհարմարվենք: Սահման մատնանշել չի կարելի: Միակը, որ մեծաքանակ հանդերձանքի և գինամթերքի պահանջի դեպքում հաշվի է առնվել, դա հնարավորությունն է, որ պետությունները բանակի համար մեր թվով չեն ցանկանա սահմանափակվել կամ միլիցիան գինել: 3. Մենք այդ հարցով չենք զբաղվել և գտնում ենք, որ այդ մասին հոգսերը մեր հանձնաժողովի իրավասության մեջ չեն մտնում:

ԽԱՏԻՍՅԱՆԸ խոսում է 1/X-ին Հայկական Պատվիրակությունից ստացված այն տեղեկությունների մասին, որոնք Կովկասում բոլշևիկյան զորքերի քանակին են վերաբերում, որտեղ այժմ 60.000 կարմիր զինվոր են գտնվում և ևս 42.000-ը մոտակա վայրերից կարող են հավաքվել կարճ ժամկետում: Արդյո՞ք այդ հանգամանքը ռազմական հանձնաժողովը հաշվի է առել:

Գեն.[երալ] ԽԱԳՈՆԴՈԿՈՎ: Ռազմական հանձնաժողովը ենթադրել է, որ կամ երկրի ներսում դժգոհությունները թուլացնում են իշխանությունը, կամ իշխանությունն ինքը պետք է սանձահարվի և ստիպված լինի կապիտալիստական պետություններին գիջել և կարող է համաձայնվել մաքրել Կովկասը, որտեղ այդ ժամանակ կմնան միայն «ինքնադասալիքները» և որ կամ ստիպված կլինի միայն նրանց հանդիպել:

Հաշվի ենք առել, որ կան շրջաններ, որտեղ բոլշևիկյան իշխանությունը բացարձակապես գոյություն չունի և 100.000 բանակը բոլշևիկների համար բավարար չէ: Բերում է և Հայաստանում բոլշևիկների դեմ ապստամբության օրինակը³⁶, որը հաջողությամբ էր ավարտվել, և բոլշևիկների հետ վրացիների հաջողված ընդհարման սկիզբը:

ԽԱՏԻՍՅԱՆ: Զեկույցը նախատեսված է հայտնի իրավիճակի համար:

Գեն.[երալ] ԽԱԳՈՆԴՈԿՈՎ: Այո: Հարկավոր է և բնակչության կրած դժբախտությունը հաշվի առնել, և ամենից գլխավորը՝ մերձակա որևէ տարածքում տեղաշարժման հնարավորությունը և Վրաստանի ձակատագրական դեր խաղալը:

36 Նկատի ունի 1921 թ. Փետրվարյան ապստամբությունը:

ԽԱՏԻՍՅԱՆ: Եթե ողջ զեկույցը նախատեսված է անորոշ ժամանակի համար, ապա այն պետք է բաժանվի 3 փուլի. 1. Սպասողական, 2. Կովկասում արմատավորում, 3. Իշխանության հեռացում:

Գեն.[երալ] ԽԱԳՈՆԴՈԿՈՎ: Գլխավոր բազան սկզբում Կովկասից դուրս պետք է լինի, որտեղից առաջավոր բազաներ պետք է նյութի անհրաժեշտ քանակ մատակարարվի:

ՆԱԽԱԳԱՀԸ կրկին առաջարկում է կադրի այդ քանակը նվազեցնել:

Գեն.[երալ] ԽԱԳՈՆԴՈԿՈՎ: Ինչքան քիչ կադր, այնքան էժան, սակայն խնդրի լուծումը դժվար կլինի:

ՆԱԽԱԳԱՀՆ իր առաջարկությունը պնդում է: ՄԴԻՎԱՆԻՆ նվազեցման դեմ նկատառումներ է ներկայացնում:

ՉԵՐՄՈՆԵՎ: Խնայողության իմաստով, իհարկե, ավելի լավ է նվազեցնել: Սակայն, մի մոռացեք, որ ֆրանսիական հեղինակություններին ծիծաղելի կթվան փոքր թվերը, առավել ևս, որ փոքր կադրը ճանապարհին աճում է:

ՋԱԲԱԳԻՆ տեղեկությունների բացակայության վրա է նշում, որպեսզի ճշտվի այդ անհայտ մեծությունը, սակայն քանի որ ֆրանսիական կառավարությունը ցանկություն ունի ինչ-որ բան ստեղծել կամ օգնել, ապա 50 միլիոն թիվը չնչին է: Մեզ՝ լեռնականներիս, կադրի մեր մասնաբաժինը քիչ է: Մեզ մոտ դեպի կադրեր հոսքը հսկայական է, և 2.700 հոգի կադրը անբավարար կլինի: Առաջարկում է նշել երկու թիվ. նվազագույն և նորմալ:

Գեն.[երալ] ԱՂԱԲԵԿՈՎ: Ադրբեջանի համար 2.700 կադրը բավարար է: Մենք բանակ ունեինք, այն ոչ մի տեղ չի գնացել: Բոլշևիկներին չհաջողվեց իրենց մոտ ծառայության հրապուրել նրանց: Անվտանգության հողի վրա Միսկվայից համապատասխան հրահանգներ են տրվել, որպեսզի ադրբեջանական բանակ չհավաքվի: Մենք կարող ենք առանց թուրքական բանակի օգնության 25.000 բանակ հավաքել: Սակայն մեզ մոտ մտավորականությունից զինվորական ծառայության շատ փոքրիկ տոկոս է գնացել և մեզ նախօրոք սպաների և ենթասպաների մեծ կադր է անհրաժեշտ:

ՆԱԽԱԳԱՀԸ իր առաջարկը չի պնդում և առաջարկում է 2.700 թիվը ընդունել: Առաջարկն ընդունվում է միաձայն:

ՆԱԽԱԳԱՀ: Առաջարկում է «Շտաբ» անվանումը փոխարինել «կադրային ջոկատի հրամանատարություն» արտահայտությամբ, որպեսզի խոշոր անվանումներից խուսափենք:

Գեն.[երալ] ԽԱԳՈՆԴՈԿՈՎԸ պնդում է ռազմական հանձնաժողովի տեսակետը, բացատրելով գնդի հրամանատարի անհնարինությունը՝ միաժամանակ ուսանել զինվորներին և ղեկավարել զորքը և նրա նախապատրաստումը:

ՄԴԻՎԱՆԻՆ ներկայացնում է ռազմական հանձնաժողովի տեսակետը. եթե համեմատենք երեք կազմակերպություններ – Փարիզ-կենտրոնը, բանակների ղեկավար կենտրոնը և շտաբները, ապա կերևա, որ այստեղ հարկավոր է տնտեսական մաս նախապատրաստել, որպեսզի հետո Կովկասում բանակներ ձևավորենք:

Ջենքի տարբեր տեսակների այստեղի տեսուչները ողջ Կովկասի համար ամեն ինչով պահուստավորում են, իսկ առանձին բանակների տեսուչները կենտրոնական պահուստներից առանձին բանակների համար անհրաժեշտ են ստանում, և հաստիքները կրճատել չի կարելի:

ՉԵՐՄՈՆԵՎԸ ռազմական հանձնաժողովի տեսակետը պաշտպանում է:

ԹՈՓՉԻԲԱՇԵՎ: Շտաբն, իհարկե, պետք է ազգային լինի: Սակայն գործի հաջողության համար ղեկավար կենտրոն պետք է լինի, և ոչ այստեղ, այլ ինչքան հնարավոր է՝ գործողությունների թատերաբեմին մոտ, մեր սահմաններին:

Գեն.[երալ] ԱՂԱԲԵԿՈՎ: Այստեղ շտաբները բանակների ապագա շտաբների համար յուրահատուկ կադր են:

ՆԱԽԱԳԱՀԸ կենտրոնախույս ուժերից ցանկանում է խուսափել, որպեսզի դա գործողությունների մեջ հայտնի համերաշխությանը վնաս չբերի:

Գեն.[երալ] ԽԱԳՈՆԴՈՎՈՎ: Պետերը որևիցե ինքնուրույն իրավունքներ չեն ստանա, սակայն ողջ հարցը կորպուսի հրամանատարությանն է հանգում և ապագա բանակների կենսունակ գոյատևումը մենք միայն դրանով կապահովենք:

ՓԱՓԱԶՅԱՆ: Հայկական Պատվիրակությունը ձևական նկատառումներով քվեարկությունից ձեռնպահ է մնում. գեն.[երալ] ԿՈՐԳԱՆՈՎԸ վերջին նիստին չի մասնակցել, ապա՝ հայերը հայտնի նկատառումներով ենթադրվող տարածքում ոչինչ չեն կարող ձևավորել:

ՆԱԽԱԳԱՀ: Վրացիները նույն վիճակում են գտնվում, և այ. ՓԱՓԱԶՅԱՆԸ շատ է սխալվում:

Ընդունվում է որոշում: Խնդրել ռազմական հանձնաժողովին վերջնական տեսքով նախագիծ պատրաստել և այն ֆրանսերեն թարգմանել: Դա պետք է բյուջեի նախագիծ ծառայի:

Գեն.[երալ] ԿՈՐԳԱՆՈՎԸ նախագծի վրա աշխատանքն առանց ռազմաքաղաքական մասի նախնական քննարկման անհնարին է գտնում, և դրա համար խոստանալով հաճախել ռազմական հանձնաժողովի նիստերին՝ ակտիվ գործունեությունից ձեռնպահ է մնում, իր Պատվիրակությանը տեղեկացրած լինելու դերով սահմանափակվելով:

ՆԱԽԱԳԱՀ: Այն ամենն, ինչ կատարում է ռազմական հանձնաժողովը, միայն Միութենական Խորհրդի հետագա քայլերի համար նյութ կլինի:

ԹՈՓՉԻԲԱՇԵՎԸ ռազմական հանձնաժողովին առաջարկում է, որ ռազմաքաղաքական մասն ինքը քննարկի, որտեղ գեն.[երալ] ԿՈՐԳԱՆՈՎԸ կկարողանա կարծիք հայտնել և իր Պատվիրակության տեսակետները պնդել:

ԹՈՓՉԻԲԱՇԵՎԸ: Մենք ոչ միայն դեմ [չ]ենք այն բանին, որպեսզի ռազմատեխնիկականի կապակցությամբ Հանձնաժողովը ռազմաքաղաքական մասը քննարկի, այլև մենք կողջունելիք այդ, և ես առաջարկում եմ՝ խնդրել ռազմական հանձնաժողովին դրանով զբաղվել:

ՆԱԽԱԳԱՀ: Այո, մենք այդպես էլ կարծում ենք:

Գեն.[երալ] ԿՈՐԳԱՆՅԱՆ: Այդ դեպքում ես հանձնաժողովում այնպես կզբաղվեմ, ինչպես մնացած անդամները:

ՄԴԻՎԱՆԻ: Մենք թվեր ենք տվել: Իսկ դուք դիվանագետներդ առաջին մասը քննարկեցեք, իսկ մենք այդ դեպքում հետագա աշխատանքը կվարենք:

Որոշվեց: Խնդրել ռազմական հանձնաժողովին զեկույցի ռազմաքաղաքական մասը քննարկել:

ՉԵՐՄՈՆԵՎ: Ես ցանկանում եմ հետևյալ հայտարարությունն անել և խնդրում եմ հավաքվածներին դրան ուշադրություն դարձնել:

Նկատի ունենալով, որ ռազմական հանձնաժողովի աշխատանքն ընդհանրապես խստագույն գաղտնիություն է պարտավորեցնում, հատկապես ներկա դեպքում խորացվող հնարավորությամբ, մեր ժողովուրդների նկատմամբ բռնաճնշումները և երրորդ անձանց նկատմամբ տհաճությունները, որպիսիք տվյալ դեպքում մեզ օգնել ցանկացող մարդիկ են, ես ռազմական հանձնաժողովին առաջարկում եմ այս գործում բացարձակ գաղտնիություն պահպանելու համար անհրաժեշտ միջոցներ ձեռնարկել:

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆՆ ԸՆԴՈՒՆՎՈՒՄ Է:

Հաջորդ նիստը նշանակվում է շաբաթ օր, հետկեսօրեի ժամը 4-ին, Վրացական Պատվիրակության նստավայրում, Կոնստանտին Պլատոնի ԿԱՆԴԵԼԱԿԻ մասնակցությամբ:

Նիստը փակվում է ժամը 7.30 րոպեին:

Նախագահ՝ Ա. Ի. ՉԻԵՆԿԵԼԻ
Քարտուղար՝ Ի. Խ. ԻԲՐԱՀԻՄՈՎ

ՀԱԱ, ֆ. 1435, ց. 3, գ. 28, թթ. 45-50: Վավերացված պատճեն: Մեքենագիր: Թարգմանություն ռուսերենից:

ԹԻՎ 10
ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Կովկասյան չորս Հանրապետությունների Ներկայացուցիչների նիստի, 1922 թ. հունվարի 19, կեսօրից հետո ժամը 4-ին, Վրացական Պատվիրակության նստավայրում:

Ներկա էին՝ ԱՀԱՐՈՆՅԱՆ, ԽԱՏԻՍՅԱՆ (Հայաստան), ԹՈՓՉԻԲԱՇԵՎ (Ադրբեջան), ՉԵՐՄՈՆԵՎ (Հյուսիսային Կովկաս), ՉԽԵՆԿԵԼԻ, ԳԵԳԵՉԿՈՐԻ (Վրաստան):

ՕՐԱԿԱՐԳ

Կաննի կոնֆերանսի³⁷ մասին տեղեկատվություն,
Ջենովայի կոնֆերանսի³⁸ հանդեպ Միության դիրքորոշումը,
Արևելյան հարցը՝ կովկասյանի հետ կապակցությամբ:

Լսելով պ. ԳԵԳԵՉԿՈՐԻԻՆ, ով Կաննում տեղի ունեցող կոնֆերանսի մասին որոշ տեղեկություններ տվեց, Խորհուրդն անցավ օրակարգի մյուս երկու հարցերի քննարկմանը:

ՈՐՈՇՎԵՑ. Կարծիքների փոխանակումից հետո կատարել ամեն անհրաժեշտը, որպեսզի Ջենովայի կոնֆերանսին Կովկասյան Հանրապետությունների մասնակցությունը թույլատրվի, և այդ իմաստով տարբեր անձանց և խմբերի, ինչպես նաև մամուլի աջակցության դիմել:

ՉԵՐՄՈՆԵՎԸ և ԹՈՓՉԻԲԱՇԵՎԸ հաջորդ նիստին տեղեկատվական աշխատանքի նախագծի քննարկմանն են հրավիրվում:

Նրանց հանձնարարվում է Կովկասում հիմնավորապես շահագրգիռ նավթարդյունաբերողների հետ բանակցել, ինչպես նաև՝ պ. Սենատոր ՌԵՅՆԱԼԻ հետ հանդիպել:

ԽՈՐՀՈՒՐԴԸ պ. ՊՈՒԱՆԿԱՐԵԻ³⁹ և արտաքին գործերի նախարարությունից տարբեր անձանց, ինչպես օրինակ՝ ՊԵՐԵՏՏԻ ԴԵ ԼԱ ՌՈԿԿԱՅԻ⁴⁰ և ուր.[րիշների] հետ հանդիպում կազմակերպելն անհրաժեշտ է գտնում, որպեսզի մեր հարցի ներկա վիճակի մասին նրանցից տեղեկանանք:

Վերջապես, ԽՈՐՀՈՒՐԴԸ որոշեց, որպեսզի յուրաքանչյուր ՊԱՏՎԻՐԱԿՈՒԹՅՈՒՆ Կոստանդնուպոլսում իր ներկայացուցչից հարցնի, թե կարելի է արդյոք Կովկասում ընդհանուր շարժում սպասել:

Օրակարգում առկա 3-րդ հարցի քննարկումը հաջորդ նիստին հետաձգվեց:

Նիստը փակվեց երեկոյան ժամը 7 ½-ին:

Նախագահ՝ Ա. ՉԽԵՆԿԵԼԻ
Քարտուղար՝ ԱՍԱԹԻԱՆԻ

ՀԱԱ, ֆ. 1435, ց. 3, գ. 28, թթ. 22: Վավերացված պատճեն: Մեքենագիր: Թարգմանություն ռուսերենից:

37 Գումարվել է 1922 թ. հունվարի 6-13-ին Կաննում (Ֆրանսիա): Մասնակցել են եվրոպական տերությունները, իսկ ԱՄՆ-ը դիտորդ էր: Կոնֆերանսը քննարկել է Առաջին աշխարհամարտում պարտված Գերմանիայից ու նրա դաշնակիցներից ռազմատուգանքների, ինչպես նաև Ռուսաստանի նախկին պարտքերի ստացման հարցը:

38 Գումարվել է 1922 թ. ապրիլի 10-մայիսի 20-ին Ջենովայում (Իտալիա): Մասնակցել են 29 պետություն, այդ թվում՝ Խորհրդային Ռուսաստանը: ԱՄՆ-ը դիտորդ էր: Կոնֆերանսում քննարկվել է բոլշևիկների կողմից նախկին Ռուսական կայսրության բոլոր պարտքերի ընդունման հարցը, ինչը վերջնական լուծում չստացավ:

39 Պուանկարե Ռայմոն (1860-1934) – ֆրանսիական քաղաքական գործիչ: 1912-1913, 1922-1924, 1926-1929 թթ. եղել է Ֆրանսիայի վարչապետ, 1913-1920 թթ.՝ նախագահ:

40 Ֆրանսիայի արտգործնախարարության քաղաքական բաժնի պետ:

Թիվ 11
ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Կովկասյան չորս Հանրապետությունների Ներկայացուցիչների նիստի, 1922 թ. հունվարի 28, կեսօրից հետո ժամը 4-ին, Հայկական Պատվիրակության նստավայրում:

Ներկա էին՝ ԱՀԱՐՈՆՅԱՆ, ԽԱՏԻՍՅԱՆ, ՓԱՓԱՋՅԱՆ (Հայաստան), ԹՈՓՉԻԲԱՇԵՎ, ՄԱՀՇԵՌՈՒԱՄՈՎ (Ադրբեջան), ՉԵՐՄՈՆԵՎ, ԶԱԲԱԳԻ, ԲԱՄՄԱՏ (Հյուսիսային Կովկաս), ՉԻՆԵՆԿԵԼԻ (Վրաստան):

Մինչև օրակարգի հարցերին անցնելը՝ նիստի որոշ անդամներ տեղեկանքի տեսքով հակիրճ տեղեկություններ տվեցին այն հանդիպումների մասին, որոնք նրանք վերջին օրերին ունեցել էին:

1. ՉԻՆԵՆԿԵԼԻՆ պ. ՊԵՐԵՏՏԻ ԴԵ ԼԱ ՌՈՎԿԿԱՅԻ հետ հանդիպման մասին հաղորդեց: ՊԵՐԵՏՏԻՆ նրան առաջարկել է Կովկասի Հանրապետություններին հետաքրքրող հարցերի ցուցակ ներկայացնել և խոստացել պ-րն ՊՈՒԱՆԿԱՐԵԻՆ այդ ամենը հաղորդել, և չորս Հանրապետությունների ներկայացուցիչների համար վերջինիս մոտ ընդունելության հասնել: Դրանից հետո, պ. ՉԻՆԵՆԿԵԼԻՆ ԽՈՐՀՐԴԻՆ [Ֆրանսիայի] Նախարարների Խորհրդի Նախագահին կից ստատս-քարտուղար պ. ԿՈՒՐԱՅԻ գիտությամբ պ. ԲԷՍՍԻ կազմած նոտայի նախագծի մասին հաղորդեց, որը չորս Հանրապետությունների Ներկայացուցիչները պ. ՊՈՒԱՆԿԱՐԵԻՆ պետք է ներկայացնեն:

2. ԽԱՏԻՍՅԱՆԸ զեկուցում է այն հանդիպման մասին, որ Կովկասյան Հանրապետությունների կարիքների և ֆրանսիական հասարակական կարծիքի շրջանում այդ հանրապետությունների համար քարոզչության կազմակերպման շտապ անհրաժեշտության վերաբերյալ նա և պ. ՉԵՐՄՈՆԵՎԸ սենատոր ՌԵՅՆԱԼԻ հետ ունեցել են: Որպես «Ունիվերսալ Թղթակցություն» անսագրի գլխավոր խմբագիր՝ ՌԵՅՆԱԼԸ այդ առումով մեզ շատ օգտակար կարող է լինել:

Խորհուրդն անցնում է օրակարգի քննարկմանը:

Նախագահն ընթերցում է Կովկասյան երեք (ՀԱՅԱՍՏԱՆ, ԱՐԲԵՋԱՆ, ՎՐԱՍՏԱՆ) Հանրապետությունների տարածքում երկաթգծի շահագործման կոնցեսիաներին վերաբերող նամակի նախագիծը, որը Հանրապետությունները որոշել են դքսուհի ԳՅՈՒՋԵՍՄԻՆ ներկայացնել: Մտքերի կարճ քննարկումից հետո Հայկական Պատվիրակությանն առաջարկվեց այդ նամակը վերջնականորեն խմբագրել, այն ստորագրման տալ և ուղարկել հասցեատիրոջը:

Խորհուրդն անցնում է նամակի նախագծի քննարկմանը, որը չորս Հանրապետությունների ներկայացուցիչները [Ֆրանսիայի] Նախարարների Խորհրդի Նախագահ պ. ՊՈՒԱՆԿԱՐԵԻՆ պետք է ներկայացնեն, ինչի մասին վերը հիշատակվեց: Խորհրդի անդամների որոշ դիտողություններից հետո որոշվեց Հայկական Պատվիրակությանը խնդրել նոտան շուտափույթ պատրաստել, այն չորս հանրապետությունների ներկայացուցիչներին ստորագրման տալ և պ. ՊՈՒԱՆԿԱՐԵԻՆ ներկայացնել:

Խորհուրդը «Ունիվերսալ Թղթակցության»-ը նյութական օգնության մասին հարցը քննարկելով՝ միաձայն այդ առաջարկն ընդունեց և այդ նպատակով որոշեց ամսեկան 4.000 ֆր.[անկ] բաց թողնել, այսինքն՝ յուրաքանչյուր Հանրապետության 1.000-ական ֆր.[անկ] մասնաբաժին:

ՉԻՆԵՆԿԵԼԻՆ Խորհրդին հաղորդում է, որ օրերս նրան այցելել են պպ. ՍԱՎԻՆ-ԿՈՎՐ⁴¹ և ՖԻԼՈՍՈՖՈՎԸ և առաջարկել համատեղ աշխատել՝ Ձեռովայում ապագա կոնֆերանսը նկատի ունենալով: Այդ հարցի առթիվ նրանք մեզ խնդրում են իրենց

41 Սավինով Բորիս Վիկտորի (1879-1925) – ռուս քաղաքական գործիչ: 1924 թ. ահաբեկչություն կատարելու նպատակով վերադարձել է ԽՍՀՄ, ձերբակալվել և գնդակահարվել:

մասնակցությամբ չորս Հանրապետությունների Ներկայացուցիչների ժողով գումարել: Խորհուրդն այդ առաջարկն ընդունեց և որոշեց հաջորդ նիստին պպ. ՍԱՎԻՆ-ԿՈՎԻՆ և ՖԻԼՈՍՈՖՈՎԻՆ հրավիրել:

Դրանից հետո Խորհուրդը Կովկասի արդյունաբերողների կոնֆերանսի կազմակերպման հարցով զբաղվեց: Այդ առաջարկի հեղինակ ԹՈՓՉԻԲԱՇԵՎԸ զեկուցեց, որ նա Ադրբեջանի արդյունաբերողների հետ արդեն զրուցել է և նրանց առաջարկել Կովկասում արդյունաբերողների հատուկ խումբ կազմակերպել: Նա մյուս պատվիրակություններին առաջարկում է նույնպես նման նախապատրաստական ժողովներ հրավիրել՝ հետագայում ամբողջ Կովկասի Արդյունաբերողների Ընդհանուր ժողով գումարելու նպատակով, դրանից հետո՝ Կովկասի արդյունաբերողների ընդհանուր կազմակերպության ձևավորման համար:

Խորհուրդն այդ առաջարկությունն ընդունեց և որոշեց յուրաքանչյուր պատվիրակության առաջարկել իրենց երկրի արդյունաբերողների խորհրդակցություն գումարել և միաժամանակ խնդրել պ. ՉԵՐՄՈՆԵՎԻՆ Կովկասի արդյունաբերողների ընդհանուր հանդիպում կազմակերպել, փետրվարի 10-ից ոչ ուշ, Կովկասի Առևտրա-Արդյունաբերական Միության ձևավորման նպատակով:

Նիստը փակվում է երեկոյան ժամը 7-ին:

Նախագահ՝ Ա. Ի. ԽԱՏԻՍՅԱՆ
Քարտուղար՝ ՔՈՉԱՐՅԱՆ

ՀԱԱ, ֆ. 1435, ց. 3, գ. 28, թթ. 43-44: Վավերացված պատճեն: Մեքենագիր: Թարգմանություն ուսերենից:

ԹԻՎ 12

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Կովկասյան չորս Հանրապետությունների Ներկայացուցիչների Խորհրդի նիստի, 1922 թ. փետրվարի 9, կեսօրից հետո ժամը 4-ին, Հայկական Պատվիրակության նստավայրում:

Ներկա էին՝ ԱՀԱՐՈՆՅԱՆ, ԽԱՏԻՍՅԱՆ, ՓԱՓԱՋՅԱՆ (Հայաստան), ԹՈՓՉԻԲԱՇԵՎԸ, ՇԵՅԻՆՈՒԼ-ԻՍԼԱՄՈՎ (Ադրբեջան), ՉԵՐՄՈՆԵՎԸ, ԲԱՄՄԱՏ, ՋԱԲԱԳԻ (Հյուսիսային Կովկաս), ՉԻՇՆԿԵԼԻ (Վրաստան):

Օրակարգում պ. ՍԱՎԻՆԿՈՎԻ և նրա կոլեգաների զեկույցն էր, սակայն մինչ նրանց գալը Խորհուրդը պ. ՆԱԽԱԳԱՇԻ առաջարկով զբաղվում է հերթական ուրիշ հարցերով:

ՉԵՐՄՈՆԵՎԸ և ԹՈՓՉԻԲԱՇԵՎԸ առաջարկում են մոտակա օրերից մեկում Կովկասյան չորս Հանրապետությունների արդյունաբերողների ընդհանուր ժողով նշանակել:

Ընդհանուր համաձայնությամբ որոշվեց այդ ժողովը հնարավորինս շուտ գումարել:

Ժողովի անդամները պ. ՍԱՎԻՆԿՈՎԻ ներկայացրած հարցերի շուրջ կարծիքներ փոխանակեցին:

Բոլորը համաձայնվեցին, որպեսզի նախապես Կովկասյան չորս Հանրապետությունների Ներկայացուցիչների Խորհրդի հատուկ ժողով գումարվի, որն այդ Արդյունաբերողների ժողովի համար օրակարգ կմշակի:

Հետո Խորհուրդն այն հարցերի շուրջ կարծիքներ փոխանակեց, որոնք պ. ՍԱՎԻՆԿՈՎԻ զեկույցի կապակցությամբ կարող են ծագել:

Ժամը 5-ին հայտնվեցին պպ. ՍԱՎԻՆԿՈՎԸ, ՖԻԼՈՍՈՖՈՎԸ և ՖԻՐՄԵՆԲԵՐԳԸ:

Պ. ՆԱԽԱԳԱՇԻ առաջարկով պ. ՍԱՎԻՆԿՈՎԸ «կանաչների» կազմակերպության

գործունեության և նախագծվող աշխատանքների ծրագրի մասին մանրամասն զեկուցեց: Կազմակերպության ծրագրի գլխավոր կետերը, որոնք նա ներկայացրեց, հետևյալն են.

1. Չե-կայի⁴² ոչնչացումը, 2. Մասնավոր սեփականության իրավունքը, 3. Կառավարման ազատություն և խորհուրդներում ազատ ընտրություններ:

Ներկա պահին կոմունիզմը և խորհրդային կառավարությունն իր գոյության ճգնաժամային փուլ է ապրում, նրանց լիակատար ձախողումը շատ մոտ է: «Կանաչ» շարժումը Ռուսաստանում շատ է տարածված, և ուկրաինացիների, Դոնի ջոկատների, «սպիտակ» ռուսների, կարելների և այլոց հետ լրիվ համաձայնության մեջ է գտնվում: Անհրաժեշտ է, որպեսզի և ուրիշ ազգային ուժերը, ինչպես օրինակ՝ Կովկասի ազգային Հանրապետությունների ուժերը, իրենց ջանքերն ընդհանուր ռուսական շարժմանը միացնեն, որպեսզի բոլշևիկյան ռեժիմի անկումն արագացնեն:

Առաջ է քաշվում ռուսական ազգային շարժման, «կանաչների» և ազգային ուժերի համատեղ աշխատանքի անհրաժեշտությունը:

Հատկապես հիմա, Ջենովայի կոնֆերանսին սպասելիս, մենք պետք է մեր դիվանագիտական ջանքերը միավորենք, որպեսզի Դաշնակիցների առջև բոլշևիկյան ռեժիմը վերջնականորեն վարկաբեկենք:

Նախագահ՝ Ա. ԽԱՏԻՍՅԱՆ
Քարտուղար՝ ՔՈՉԱՐՅԱՆ

ՀԱԱ, ֆ. 1435, ց. 3, գ. 28, թթ. 27: Վավերացված պատճեն: Մեքենագիր: Թարգմանություն ռուսերենից:

ԹԻՎ 13

ԿՈՎԿԱՍՅԱՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉՆԵՐԻ ՆԱՄԱԿԸ ՖՐԱՆՍԻԱՅԻ ՎԱՐՉԱՊԵՏԻՆՆԵՐԻ

23.2-[19]22

Նորին Գերագանցություն Պարոն Պուանկարեին,
Նախարարների Խորհրդի Նախագահին և Արտաքին Գործերի Նախարարին,
Պարոն Նախագահ,

Հունվարի 29-ի նամակով Կովկասի Հանրապետությունների փարիզյան ներկայացուցիչները Ձերդ Գերագանցությանը պատիվ ունենի հակիրճ ներկայացնել նշյալ Հանրապետությունների Միության առավել շտապ ակնկալիքները, որոնք հետևյալն են.

1.Կովկասի Հանրապետությունները՝ որպես Ռուսաստանից լրիվ իմաստով անկախ միավոր, Եվրոպայի տնտեսական վերականգնման համակարգում ներառել:

2.Կարգադրել, որպեսզի ձևերի և պայմանների քննարկման ժամանակ, ըստ որոնց Եվրոպայի տնտեսական վերականգնմանը Կովկասյան Հանրապետությունները կկարողանային մասնակցել, պատշաճ կերպով նշյալ Հանրապետությունների հաստատված ներկայացուցիչները՝ որպես օրինական ներկայացուցիչներ կներառվեն:

Թեպետ և մենք չենք կասկածում, որ Ֆրանսիան, որի բարյացակամ զգացմունքները ճնշված ժողովուրդների նկատմամբ լավ հայտնի են, մեր կոչին բարենպաստ կարձագանքի, մեզ առայժմ ոչ մի հնարավորություն չի տալիս կանխագուշակել այն որոշումները, որոնք այդ առթիվ ֆրանսիական կառավարության կողմից կարող են ընդունվել: Մեր մտադրությունն այժմ այն է, որպեսզի այդ երկու կետերի վրա կանգ առնենք, որպեսզի մեկ հարցի վրա Ձերդ Գերագանցության ուշադրությունը գրավենք, որը Ջենովայի կոնֆերանսի նախօրեին մեր ամենից շատ հոգատարության առարկան է:

42 Արտակարգ հանձնաժողով – խորհրդային անվտանգության պետական մարմին:

Ձերդ Գերագանցությունը կհասկանա մեր միանգամայն արդարացի հուզմունքն այն պահին, երբ Մեծ Ազգերը հավաքվում են հրապարակային նիստում խորհրդային ներկայացուցիչներին լսելու, որի ժամանակ մտավախություններ կան, որ կարող են որոշումներ ընդունվել, որոնք կարող են մեր պաշտպանած ազգային շահերին վերջնականապես և ուժգին վնասել:

Ջենովայի կոնֆերանսին Կովկասյան Հանրապետությունների օրինական ներկայացուցիչների մասնակցությանը Մոսկվայի Սովետների ընդդիմությունը և իր դրածո այսպես կոչված «Ժողովրդական Կոմիսարներին» բերելու Սովետների մտադրությունը, մյուս կողմից՝ վստահելի աղբյուրներից հայթայթված տեղեկությունները մեզ լրիվ հիմք են տալիս ենթադրելու, որ Խորհրդային Հանրապետություններն արդեն նախապատրաստվել են Եվրոպական տերություններ-վարկատուներին տնտեսական երաշխիքների շարք տրամադրել, որոնց թվի մեջ՝ Մոսկվայի կառավարությունը Կովկասի բնական հարստությունները, հատկապես նավթն էլ է նույնպես ներառել:

Ներկա նամակով մենք պատիվ ունենք ամենից վճռական բողոք ձևակերպել և չտատանվելով հայտարարել – դրան պարտավորեցնում է մեզ այն ժողովուրդների նկատմամբ մեր պարտքը, որոնց մենք ներկայացնում ենք, որ առանց մեզ՝ Կովկասյան Հանրապետությունների օրինավոր հաստատված ներկայացուցիչներին, կնքված այդ բնույթի ցանկացած համաձայնություն հավասար է գրոյի, և ոչ իրականանալի ենք համարում:

Եթե հիմա իրենց սրերի ուժի վրա հիմնվող Ռուսական Սովետները գտնում են, որ Կովկասի Հանրապետությունների անունից ժամանակն է տնտեսական երաշխիքներ և կոնցեսիաներ խոստանալը, անկասկած է, որ ապագայում շահագրգիռ ժողովուրդներից նրանց տարածքներում այդ կոնցեսիաների բարիքներից ոչ մի ուժ օգտվելու հնարավորություն չի կարող ստանալ:

Ավելորդ չէ Ձերդ Գերագանցությանը հիշեցնել, որ Կովկասյան Հանրապետությունների տարածքում Սովետներն իրենց պաշտոնյաներին և գործակալներին միայն կոպիտ զինվորական ուժի շնորհիվ են ի վիճակի պահպանել, ինչի արդյունքում հետագայում այդ տարածքները տնօրինելու ոչ մի իրավունք չունեն:

Սա միջազգային իրավունքի ամենից տարրական օրենքների բոլորին հայտնի և ակնհայտնի արդյունք է, և այդ առթիվ մեր հավակնություններն անհրաժեշտ չէ հիմնավորել:

Մենք համենայն դեպս մեզ տրված հնարավորությունից օգտվելով՝ Ձերդ Գերագանցությանը ներկայացնում ենք հետևյալը.

1. 1921 թ. հունիսի 10-ի հռչակագրի պատճենը, որտեղ Կովկասյան Հանրապետությունների Ներկայացուցիչները հանդիսավոր հայտարարել են, որ Հանրապետություններից մեկի տարածքում որևէ մեկին կովկասյան ժողովուրդների ազատ կամքի արտահայտմամբ չընտրված իշխանությունների կողմից տրված բոլոր համաձայնագրերը և արտոնյալ իրավունքները՝ որպես գրոյի հավասար և անիրական կնկատվեն:

2. Գերագույն Խորհրդի նախագահին հասցեագրված և նույն վճռական հայտարարություններն ընդգրկող 1922 թ. հունվարի 3-ի և 4-ի նամակների պատճենները:

Այժմ, երբ հարցը հստակ դրվել է, իսկ դա անհրաժեշտ է, մենք թույլ ենք տալիս մեզ, ավարտելով նամակը, Ձերդ Գերագանցության ուշադրություն այն բանի վրա հրավիրել, որ բացի հայտարարություններին նախորդող ցանկացած այլ փաստարկից՝ բավական է, որպեսզի ցույց տրվի այն իրողությունը, որ Ջենովայում Կովկասին վերաբերող որևէ որոշում հնարավոր չլինի ընդունել առանց տարբեր կարծիքներ արտահայտելու ազատ հնարավորություն տրվելու, այսինքն՝ Հանրապետությունների լիազոր ներկայացուցիչների բացակայությամբ:

Սեփական իրավունքով ուժեղ, մեր ծանր պատասխանատվության գիտակցության մեջ և վաղուց իմանալով արդարացի Ֆրանսիայի մեծահոգի ոգին, մենք Հանրապետության Կառավարության որոշումներին հավատով ենք սպասում:

Ընդունեցեք.....

ՀԱԱ, ֆ. 1435, ց. 3, գ. 28, թթ. 28-29: Վավերացված պատճեն: Մեքենագիր: Թարգմանություն ռուսերենից:

ԹԻՎ 14

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Կովկասյան չորս Հանրապետությունների Ներկայացուցիչների Խորհրդի նիստի, 1922 թ. ապրիլի 3: Նիստը սկսվեց կեսօրից հետո, ժամը 4-ին, Վրացական Պատվիրակության նստավայրում:

Ներկա էին՝ ԽԱՏԻՍՅԱՆ (Հայաստան), ԹՈՓՉԻԲԱՇԵՎ, ՄԱՀԵՌՈՒԱՄՈՎ (Ադրբեջան), ՉԵՐՄՈՆԵՎ, ՀԱՅՐԱԲԻ ԲԱՄՄԱՏ (Հյուսիսային Կովկաս), ՉԻԵՆԿԵԼԻ, ԿԱՆԴԵԼԱԿԻ (Վրաստան):

ՕՐԱԿԱՐԳ

Տարբեր տեղեկատվություններ և Ջենովայի կոնֆերանսին նախապատրաստություն:

ՉԻԵՆԿԵԼԻՆ և ՉԵՐՄՈՆԵՎԸ ինչպես Հռոմում, այնպես էլ Փարիզում ձեռնարկված քայլերին հակիրճ ծանոթացրին:

ԿԱՆԴԵԼԱԿԻՆ իր հերթին Խորհրդին հաղորդեց, որ Տնտեսական հանձնաժողովն ի վիճակի է նյութեր հավաքել, որոնք պետք է ներկայացվեն, անհրաժեշտության դեպքում, Ջենովայի [կոնֆերանսի] տնտեսական փորձագետներին:

Մտքերի փոխանակումից հետո ՈՐՈՇՎԵՑ մի քանի քաղաքական գործիչների՝ գլխավորապես Ջենովայի կոնֆերանսում ֆրանսիական պատվիրակության անդամների, ինչպես նաև պ. ՊՈՒԱՆԿԱՐԵԻ հետ բանակցել:

Նրանց կհաղորդվի, որ. 1. Եթե Ջենովայի կոնֆերանսը որևէ պատճառով Կովկասյան հարցին չանդրադառնա, մենք ոչ մի բան չենք առարկի, 2. Եթե նշյալ կոնֆերանսն այդ հարցին անդրադառնա, Կովկասյան Հանրապետությունների Ներկայացուցիչները պետք է լավեն, 3. Եթե Վրաստանի ճանաչման մասին հարց ծագի, Կովկասյան Հանրապետությունները Ռուսաստանի տարածքային սահմաններից պետք է բացառվեն, 4. Այն, ինչ առաջարկում է Ռուսաստանը, կարող ենք առաջարկել և մենք, ցանկալի պայմաններում աշխատելու հնարավորության համար արտասահմանյան կապիտալին բոլոր անհրաժեշտ երաշխիքները տրամադրելով:

Ահա, այս իմաստով մենք քաղաքական գործիչների աջակցությունը պետք է խնդրենք:

Ապա, Կովկասի առևտրական միության առթիվ մտքերի փոխանակություն է տեղի ունենում: Ժողովը ցանկություն է հայտնում, որպեսզի յուրաքանչյուր Պատվիրակության ներկայացուցիչ այդ միության ուժեղացմանը նպաստի:

Հետո քննարկվում է ինժեներ ԶՈՒՐԱԲՈՎԻ ծառայության մասին հարցը, որ կոչված է Միության տեխնիկական գործերով զբաղվել:

ՈՐՈՇՎԵՑ որոշակի աշխատավարձի վճարումը դադարեցնել, բայց շարունակել դիմել նրա ծառայություններին, որը փոխհամաձայնությամբ կվարձատրվի:

Հաջորդ նիստը նշանակվում է հինգշաբթի ապրիլի 6-ին, Ադրբեջանական Պատվիրակության նստավայրում:

Նիստը փակվում է երեկոյան ժամը 7 1/2-ին:

Նախագահ Ա. Ի. ՉԻԵՆԿԵԼԻ
Քարտուղար՝ Գ. ԱՄԱԹԻԱՆԻ

ՀԱԱ, ֆ. 1435, ց. 3, գ. 28, թ. 5: Վավերացված պատճեն: Մեքենագիր: Թարգմանություն ռուսերենից:

ԹԻՎ 15

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Կովկասյան չորս Հանրապետությունների Ներկայացուցիչների Խորհրդի նիստի, 1922 թ. ապրիլի 19: Նիստը սկսվում է ժամը 4 ¼-ին, կեսօրից հետո, Լեռնականների Պատվիրակության շենքում:

Ներկա էին՝ ԽԱՏԻՍՅԱՆ (Հայաստան), ՀԱԶԻԲԵԿՈՎ, ՄԱՀԵՌՈՎԱՄՈՎ, ՄԵՀԹԻԵՎ (Ադրբեջան), ՉԵՐՄՈՆԵՎ, ՀԱՅԴԱՐ ԲԱՄՄԱՏ (Հյուսիսային Կովկաս), ԳԵԳԵՉԿՈՐԻ (Վրաստան):

ՆԱԽԱԳԱՀԸ հաղորդեց պ. ԹՈՓՉԻԲԱՇՇԵՎԻ խնդրանքը՝ քննարկել վիզաների չստացմամբ ստեղծված դրությունը: Կովկասյան ներկայացուցիչների կազմակերպած սաբոտաժի տպավորություն է ստացվում, առավել ևս, որ ուկրաինական և թուրքահայերի երկու պատվիրակությունների ներկայացուցիչներն արդեն Ձենովա են մեկնել: Նա խնդրում է քննարկել, թե ինչպիսի միջոցներ է հարկավոր ձեռնարկել:

ԽԱՏԻՍՅԱՆԸ ժողովին վիզաների հետ կապված կովկասյան Հայկական Պատվիրակության հոգսերի մասին է տեղեկացնում: Թուրքահայերի պատվիրակության կողմից շաբաթ օրը վիզա են ստացել և մեկնել 3 հոգի, ապա երկու օր անց՝ ևս երկուսը: Երևանում Իտալիայի նախկին ներկայացուցիչ պ. ԳՈՐԻՆԻՆ ԽՐԵՆ ուղղված աջակցության խնդրանքին հայտարարել է, որ իրեն հայտնի է, թե կովկասյան ներկայացուցիչներին որպես պաշտոնական անձանց վիզաներ չպետք է տրվեն:

Կովկասյան հայերը բոլոր դեպքերում Հռոմում իրենց դիվանագիտական ներկայացուցիչ պ. ՎԱՐԱՆԳՅԱՆՈՎ և նրա քարտուղարով ներկայացված են: ԱՀԱՐՈՆՅԱՆԸ ֆրանսիական կառավարության ներկայացուցչի հետ այդ առթիվ խոսել է և նշել պ. ԲԱՐՏՈՒԻ հետ խոսակցությունը և պատասխան ստացել, որ պ. ԲԱՐՏՈՒԻՆ նամակ կուղարկվի:

ԳԵԳԵՉԿՈՐԻ: Իտալական դեսպանատանը պ. ՄԵԼԻՔՈՎԻՆ ասվել է, որ մինչև հատուկ հրահանգների ստացումը՝ վիզաների չտրամադրման մասին կարգադրություն է ստացվել:

ԽԱՏԻՍՅԱՆԸ առաջարկում է որպես միջոց՝ կոմս ՍՖՈՐՑԱՅԻ հետ հանդիպման կազմակերպումը:

ՆԱԽԱԳԱՀԸ առաջարկում է պ. ՉԻԵՆԿԵԼՈՒՆ լրացուցիչ հեռագիր հղել՝ խնդրելով տեղում բոլորի անունից միջնորդել:

ԳԵԳԵՉԿՈՐԻ: Մենք բոլորս դրության գնահատման հարցում համակարծիք ենք, որ ձգձգումը միտումնավոր է և բացառապես Կովկասյան ներկայացուցիչների վրա է տարածվում:

ՆԱԽԱԳԱՀԸ պնդում է կոմս ՍՖՈՐՑԱՅԻՆ այցելելու և դիվանագիտական ձևով պարզաբանելու վրա, ինչը իտալական իշխանությունների կողմից ձևականություններով է բացատրվում, իբր դա Կովկասյան ներկայացուցիչների դեմ ուղղված ելույթ է, և ընդհանրապես՝ մեր տարակուսանքը հարկ է արտահայտել:

ԽԱՏԻՍՅԱՆԸ համաձայնվում է պ. ՉԻԵՆԿԵԼՈՒՆ Ձենովայի կոնֆերանսին տարբեր պատվիրակությունների մուտքի թույլտվությունը մատնացույց անող խնդրանքով հեռագիր հղել, այն է՝ երկու ուկրաինական, բելառուսական, թուրքական և այլն, և կովկասյան պատգամավորների մուտքի թույլտվության մերժման պահով:

ԲԱՄՄԱՏԸ պնդում է ՍՖՈՐՑԱՅԻՆ դիմելու և միաժամանակ՝ պ. ՉԻԵՆԿԵԼՈՒՆ հեռագիր հղելու վրա:

ՀԱՅԴԱՐՈՎԸ առաջարկում է լուծման դեպքում կոմս Սֆորցային դիմել, բողոքի ձևով խոսել, այլ ոչ թե տարակուսանք արտահայտել:

ՄԵՀԹԻԵՎ: Իտալական դեսպանատանը կարող է պատասխանել, որ դաշնակիցների որոշմամբ Կովկասյան ներկայացուցիչներին Ձենովա մուտք թույլատրել չեն կարող, և տալ ձևական բացարկ, առավել ևս, որ Կովկասի խորհրդային ներկա-

յացուցիչներին նույնպես չեն թույլատրել:

ՆԱԽԱԳԱՀՆ անփոփելով փաստում է, որ պ. Չխենկելուն հեռագրի ուղարկումը տարակարծություն առաջ չի բերում և դրա համար էլ խնդրում է անցնել կոմս ՍՖՈՐՑԱՅԻ հետ հանդիպման հարցի քննարկմանը:

Նա նշում է, որ բոլոր պատվիրակությունները բողոքարկել են և միջնորդում է, որպեսզի յուրաքանչյուրն առանձին-առանձին, որպես ինքնուրույն, կազմակերպությունների և պետությունների ներկայացուցիչներ, չանեն, մինչդեռ անհրաժեշտ է Կովկասյան Միության անունից քայլ կատարել, և առաջարկում է քննարկվող պարզաբանման համար հանդիպման մասին գրավոր խնդրանքով կոմս ՍՖՈՐՑԱՅԻՆ դիմել:

ԳԵԳԵՉԿՈՐԻ: Հարցն առանց բողոքի չի կարելի թողնել, և անհրաժեշտ է դրությունը քաղաքական սկզբունքի տեսանկյունից պարզաբանել, և եթե դա թշնամական քայլ է, ապա հայտարարել, որ մենք ցանկանում ենք իմանալ Իտալիայի կարծիքը:

ՈՐՈՇՎԵՑ՝

1.Ե. Պ. ԳԵԳԵՉԿՈՐԻԻ ստորագրությամբ հանդիպման մասին խնդրանքով կոմս ՍՖՈՐՑԱՅԻՆ նամակ ուղարկել,

2.Պ. ՉԵՐՄՈՆԵՎԻ ստորագրությամբ պ-րն ՉԽԵՆԿԵԼՈՒՆ հեռագիր հղել:

Պ. ԽԱՏԻՍՅԱՆԸ կազմում է և կարդում պ-րն ՉԽԵՆԿԵԼՈՒՆ հղվող հեռագրի տեքստը, որը միաձայն ընդունվում է հետևյալ խմբագրությամբ. «Այսօր, միավորված Կովկասյան Հանրապետությունների ներկայացուցիչների նիստում, որոշվեց խնդրել Ձեզ Իտալիայի կառավարությանը և Կոնֆերանսի նախագահությանը Ձե՛նովա մեկնելու համար պատվիրակությունների անդամներին վիզաներ տրամադրելու խնդրանքով դիմել, ինչի մասին արդեն տաս օր առաջ միջնորդություն է հարուցվել: Կովկասյան Հանրապետությունների շահերի նկատմամբ Իտալիայի մշտական բարյացակամ վերաբերմունքը նկատի ունենալով, նրանց ներկայացուցիչները վստահ են, որ իտալա-կովկասյան հարաբերությունների շահերի ենթատեքստում նրանց խնդրանքը կհարգվի: ՉԵՐՄՈՆԵՎ:»:

Նիստը ավարտվեց երեկոյան ժամը 6-ին:

Նախագահ՝ Ա. Մ. ՉԵՐՄՈՆԵՎ
Քարտուղար՝ Ի. ԻԲՐԱՀԻՄՈՎ

ՀԱԱ, ֆ. 1435, ց. 3, գ. 28, թթ. 9-10: Վավերացված պատճեն: Մեքենագիր: Թարգմանություն ռուսերենից:

ԹԻՎ 16

[Հ. ԲԱՄՄԱՏԻ ՆԱՄԱԿԸ Ա. ԽԱՏԻՍՅԱՆԻՆ ՀԱՅԿԱԿԱՆ ԴԻՐՔՈՐՈՇՄԱՆ ՃՇՏՄԱՆ ՄԱՍԻՆ]

Փող.[ոց] Դյուֆրենոյ N. 2

Փարիզ, 1922 թ. ապրիլի 22

Նախարարների Խորհրդի նախկին Նախագահ և

Հայաստանի Պատվիրակության անդամ պարոն Խատիայանին

Փող.[ոց] Սեն-Դիդիե, N. 30

Փարիզ

Պարոն Նախագահ,

Ս. թ. ապրիլի 20-ին պատիվ ունեի Ձեզ ուղարկել «Աքշամ» թերթի կտրածո (1922 թվականի ապրիլի 11-ից), որը ներառում էր Զմյուռնիայում Փրկության Կոմիտեին

ուղղված գեներալ Պապուլասի ուղերձը:

Այդ ուղերձից երևում է, որ ներկայումս հույների ռազմատենչ նախապատրաստությունները հայերն «ամեն ինչով» աջակցում են:

Այդ թերթում վերատպված է Աթենքից հղված ապրիլի 8-ի հեռագիրը, որտեղ հաղորդվում էր, որ ինչ-որ Հայկական Պատվիրակություն հիշյալ հունական գեներալի կողմից ընդունվել է, և որ այդ պատվիրակությունը հայտարարել է այն մասին, որ հունական բանակի գործողություններին աջակցելու համար հայերը պատրաստ են ռազմաձակատի ողջ երկայնքով իրենց կյանքը և գույքը զոհել: Այդ պատվիրակությունը վստահեցրել է, որ այդ որոշումն իր կողմից Փարիզում և Լոնդոնում Հայկական ազգային պատվիրակությունների լիակատար համաձայնությամբ է ընդունվել:

Մեր վերջին և բազմաթիվ գրույցների ընթացքում ես լիակատար բավարարվածությամբ ընդունեցի Ձեր վճռական հայտարարություններն այն մասին, որ պատվիրակությունը, որին Դուք ներկայացնում եք, այն համոզման է եկել, որ ողբերգական Հայկական հարցի վերջնական լուծումը, որ կարող է երկու շահագրգիռ կողմերին բավարարել, Թուրքիայի և Հայաստանի միջև անմիջական բարեկամական համաձայնության հիման վրա կարող է միայն ձեռք բերվել:

Դրա համար էլ Հյուսիսային Կովկասի պատվիրակությունն ուրախ լինելով տեսնել, որ այդ գաղափարների շարքում Դուք օգտակար համարեցիք օգտվելով Փարիզում Օտոմանյան պատվիրակության ներկայությունից՝ նրա հետ անմիջապես հարաբերության մեջ մտնելով, և ես իրականում հաճույքով թերթացրի այդ շփումը և մեր պատվիրակության անունից ամեն հնարավորինս արեցի, որպեսզի Կովկասյան Կոնֆերանսի տեսանկյունից Հայկական հարցի բարենպաստ լուծման նշանակության վրա Օտոմանյան Կառավարության հնարավոր լուրջ վերաբերմունքն ուշադրության հրավիրել:

Համաձայնվեցեք պ-րն Նախագահ, որ այժմ Զմյուռնիայից մեր ստացած տեղեկությունները Ձեր պատվիրակության քաղաքականության պահվածքի ուղեգծին հակասում են, և Ձեր այդպես գիտակցաբար սկսած բանակցություններին ուժեղ վնասելու բնույթ կրում:

Ես կարող եմ Զմյուռնիայից ստացված հեռագրի ընթերցմամբ ինձ պատճառված հիասթափությունը թաքցնել և որևէ թյուրիմացությունից զերծ մնալու հույսով խնդրում եմ հաղորդել, թե գլխավորապես Զմյուռնիայում հայկական շարժման նկատմամբ մեր պատվիրակության որդեգրած դիրքորոշման հետ կապված գեն. [երալ] Պապուլասի և «Զմյուռնիայում Հայկական պատվիրակության» հայտարարությունն ինչքանով է ճշմարտացի:

Ընդունեցեք.....

Հ. Բամմատ

ՀԱԱ, ֆ. 1435, ց. 3, գ. 28, թ. 13: Վավերացված պատճեն: Մեքենագիր: Թարգմանություն ռուսերենից:

ԹԻՎ 17

[Ա. ԽԱՏԻՍՅԱՆԻ ՊԱՏԱՄԻԱՆ ՆԱՄԱԿԸ Հ. ԲԱՄՄԱՏԻՆ ՀԱՅԿԱԿԱՆ ԴԻՐՔՈՐՈՇՄԱՆ ԸՇՏՄԱՆ ՄԱՍԻՆ]

Հայկական Հանրապետության
Խաղաղության Կոնֆերանսում Պատվիրակություն
թ. 5969
Փող.[ոց] Սեն-Դիդիե, Փարիզ,
1922 թ. մայիսի 8
Պրն. Հայդար Բամմատովին,

Հյուսիս-Կովկաս.[յան] Հանրապետության Պատվիրակության անդամին
Փող.[ոց] Դյուֆրենոյ, թ. 2, Փարիզ

Թանկագին բարեկամ,

Ձեր ապրիլի 22-ի նամակը ստացա, որին ի պատասխան պատիվ ունեմ Ձեր կողմից ինձ հաղորդված գնյունիական տեղեկությունների վերաբերյալ իմ բանավոր հայտարարությունը գրավոր հաստատել.

Հայկական Հանրապետության Պատվիրակությունը ոչ մի առաքելություն չի վստահել կամ գեն.[երալ] Թորգոմին⁴³ մանդատ չի հանձնել, որպեսզի վերջինս իր անունից խոսի կամ գործի, որ պատվիրակությունն այդ բոլոր միջոցառումներից բացարձակապես հեռու է մնում և կմնա: Մենք Կոնստանդնուպոլսում Հայկական Հանրապետության ներկայացուցչին այդ անհիմն լուրերի հերքման համար անհրաժեշտ հրահանգներ ենք տվել: Հայկական Հանրապետության Պատվիրակության որդեգրած քաղաքական գծի առնչությամբ Ձեզ կարող եմ հավաստիացնել, որ այն ոչ մի փոփոխության ենթակա չէ:

Ստորագրություն [Ալ. Խատիսյան]

ՀԱԱ, ֆ. 1435, ց. 3, գ. 28, թ. 7: Վավերացված պատճեն: Մեքենագիր: Թարգմանություն ռուսերենից:

ԹԻՎ 18

[[ԼԵՌՆԱԿԱՆՆԵՐԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԱՏՎԻՐԱԿՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀԻ
ՀԵՌԱԳԻՐԸ ԹՈՒՐԻԱԿԱՆ ՊԱՏՎԻՐԱԿՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀԻՆ ՀԱՅԿԱԿԱՆ
ԴԻՐՔՈՐՈՇՄԱՆ ՄԱՍԻՆ]

Փարիզ, 1922 թ. մայիսի 20

Ձերդ Գերագանցություն,

Պատիվ ունեմ ուղարկել Ձեզ Հյուսիսային Կովկասի Հանրապետության նախկին արտգործնախարար և պատվիրակության անդամ պարոն Հայդար Բամմատի և Նախարարների Խորհրդի նախկին նախագահ ու Փարիզում Հայկական պատվիրակության անդամ պարոն Խատիսյանի, ում վրա հատուկ դրված է Հայկական պատվիրակության կողմից Թուրքիայի հետ անմիջական բանակցությունների ձանապարհով համաձայնության հնարավոր հիմք գտնելու խնդիրը, փոխանակած երկու նամակների պատճենները:

Ինչպես այդ գրագրության փոխանակումից հստակ երևում է, իմ նախագահությամբ պատվիրակությունը եղել է և միշտ կլինի այն կարծիքին, որ Թուրք-Հայկական Միության միասնական կողմերով ուղին անմիջական համաձայնության մեջ է:

Հայկական հարցի լուծման մեջ Եվրոպական Տերությունների և Ամերիկայի միջամտության հասնելուն ուղղված Հայաստանի ղեկավար շրջանակների կողմից սխալ և այդպես երկար հետապնդված քաղաքականությունը միշտ մեր պատվիրակության կողմից որպես ոչ միայն բուն Հայաստանի ձակատագրի, այլև Մերձավոր Արևելքում խաղաղության գործի համար մեծ վտանգ ներկայացնող՝ մերժվել է:

Դրա համար պատվիրակությունն իրենից կախված ամեն հնարավորն արել է, որպեսզի Կովկասյան Հանրապետությունների Միությանը և մասնավորապես՝ Հայկական պատվիրակությանն այդ տեսանկյունին հանգեցնի:

Իհարկե, բնական է, որ որպես Կովկասյան մահմեդական տերություն՝ մենք

43 Տվյալ ժամանակահատվածում ինքնահռչակ գեներալ Թորգոմը ձգտում էր միջազգային ասպարեզում ինքնագլուխ գործունեություն ծավալել:

սրտանց շահագրգռված ենք խրթին Հայկական հարցի կարգավորմամբ, որն այդպես ծանր ազդում է Թուրքիայի միջազգային հեղինակության վրա և վտանգում մեր երկրի ու Թուրքիայի միջև այն կապը, որն այդպես ջերմորեն մենք ցանկանում ենք, սակայն ինքնին հասկանալի է, որ որպես Թուրքիայի անկեղծ բարեկամներ և եղբայրակիցներ՝ մեր կողմից փնտրվող այդ կարգավորումն Օտոմանյան Կայսրության կենսական շահերը ոչ մի կերպ չպետք է խախտի:

Ահա և այդ ուղղությամբ մենք ամենուր պնդում ենք, որտեղ մեր կարծիքը լսում են, որ Հայկական հարցը բացառապես Թուրքիային և Հայաստանին է վերաբերում, և որ արևմտյան տերությունների ցանկացած միջամտություն որպես չարագուշակ և վտանգավոր՝ պետք է վճռականապես մերժվի:

Միաժամանակ, մենք մեզ իրավունք ենք վերապահում հարմար պահի Օտոմանյան Կառավարությանը Խալիֆաթի նկատմամբ Կովկասյան մահմեդականների կարծիքը նրանց անմիջական շահերին և ապագային բազմաթիվ դժվարություններով շաղկապված այդ նրբանկատ հարցում միանգամայն անկեղծ և լոյալ արտահայտել, և մենք չենք կասկածում, որ մեր այդ դիմումը կհասկացվի և բարենպաստ կընդունվի:

Ես անհրաժեշտ գտա այս առիթից օգտվել, որպեսզի Հայկական հարցում Հյուսիս-Կովկասյան պատվիրակության թեզիսը բացատրեմ, որ Կովկասյան Հանրապետությունների Միության նկատմամբ պատվիրակության ստանձնած պարտավորությունների սխալ և անհիմն մեկնաբանությունների տեղ չմնա:

Ձերդ Գերազանցություն, բարեհաճեցեք ընդունել խորին հարգանքներս Ձեր նկատմամբ:

Ի. Իբրահիմբեկ

ՀԱԱ, ֆ. 1435, ց. 3, գ. 28, թ. 11: Վավերացված պատճեն: Մեքենագիր: Թարգմանություն ռուսերենից: